

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաքսային միության հանձնաժողովի

2011 թվականի հոկտեմբերի 18-ի

թիվ 827 որոշմամբ



**ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

ՄՄ ՏԿ 014/2011

Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Նախաբան	3
Հոդված 1.	Կիրառության ոլորտ	3
Հոդված 2.	Սահմանումները	6
Հոդված 3.	Անվտանգության պահանջներ	14
Հոդված 4.	Համապատասխանության կանխավարկած	43
Հոդված 5.	Համապատասխանության գնահատում	44
Հոդված 6.	Երաշխիքային վերապահում	60
Հավելված 1	Ցանկ Մաքսային միության «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգություն» տեխնիկական կանոնակարգի համաձայն համապատասխանության հայտարարագրման ձեռնարկի համապատասխանության հաստատման ենթակա ճանապարհաշինարարական նյութերի	61
Հավելված 2	Ցանկ Մաքսային միության «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգություն» տեխնիկական կանոնակարգի համաձայն սերտիֆիկացման ձեռնարկի համապատասխանության հաստատման ենթակա արտադրատեսակների.....	63

Նախաբան

Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում ու Ռուսաստանի Դաշնությունում Միասնական սկզբունքների եւ տեխնիկական կանոնակարգման կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրի հիման վրա:

Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները ներդաշնակեցված են «ՄԱԿ ԵՏՀ (ՄԱՀ) միջազգային ավտոմայրուղիներ» Ժնեվի 1975 թվականի նոյեմբերի 15-ի Եվրոպական համաձայնագրի, «ՄԱԿ ԵՏՀ ճանապարհային երթեւեկության» Վիեննայի 1968 թվականի նոյեմբերի 8-ի կոնվենցիայի, «ՄԱԿ ԵՏՀ ճանապարհային նշաններ եւ ազդանշաններ» Վիեննայի 1968 թվականի նոյեմբերի 8-ի կոնվենցիայի, Եվրոպական միության 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 2004/54/EC դիրեկտիվի, «Անկախ Պետությունների Համագործակցության անդամ պետությունների ավտոմոբիլային ճանապարհներով միջազգային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների զանգվածներ եւ եզրաչափեր» 1999 թվականի հունիսի 4-ի համաձայնագրի հետ:

Հոդված 1. Կիրառության ոլորտ

1. Սույն Տեխնիկական կանոնակարգն ընդունվում է ավտոմոբիլային ճանապարհների նախագծման, շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման փուլերում ներքոնշյալի ապահովման նպատակներով՝

ա) քաղաքացիների կյանքի եւ (կամ) առողջության, գույքի պահպանում.

բ) շրջակա միջավայրի, կենդանիների եւ բույսերի պահպանություն.

գ) սպառողներին մոլորության մեջ զցող գործողությունների կանխարգելում.

դ) էներգետիկ արդյունավետության եւ ռեսուրսախնայողության ապահովում:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգը սահմանում է ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց նախագծման, շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման գործընթացների նկատմամբ անվտանգության նվազագույն անհրաժեշտ պահանջները, ինչպես նաեւ այդ պահանջներին համապատասխանության գնահատման ձեւերը եւ կարգը:

3. Ավտոմոբիլային ճանապարհների նախագծման, շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման ընթացքում դրանց տեխնիկական կարգավորման իրավական հիմք են հանդիսանում ավտոմոբիլային ճանապարհների ոլորտում տեխնիկական կանոնակարգման Մաքսային միության միջազգային պայմանագրերը եւ օրենսդրական ակտերը, սույն Տեխնիկական կանոնակարգը:

4. Սույն Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման օբյեկտներ են նոր կառուցվող, վերակառուցվող, հիմնովին վերանորոգվող եւ շահագործվող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները եւ դրանց վրա գտնվող ճանապարհային կառույցները, ներառյալ սարքավորվածության տարրերը (ճանապարհային եւ ճանապարհամերձ սպասարկման օբյեկտների համար կարգավորվում է միայն դրանց դասավորությունը), ինչպես նաեւ դրանց հետ կապված ավտոմոբիլային ճանապարհների եւ ճանապարհային կառույցների նախագծման, շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման գործընթացներն ու կիրառվող ճանապարհաշինարարական նյութերը եւ արտադրատեսակները:

5. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները չեն տարածվում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներին չվերաբերող այնպիսի ավտոմոբիլային ճանապարհների նկատմամբ, ինչպիսիք են՝ արդյունաբերական, շինարարական, անտառային եւ այլ արտադրական ձեռնարկությունների ավտոմոբիլային ճանապարհները, ժամանակավոր օգտագործման համար նախատեսված ճանապարհները, հատուկ օտարման գոտիներում տեղակայված եւ պաշտպանության կարիքների համար կամ

բացառապես սպորտային նպատակներով կառուցվող ճանապարհները:

Դրանից բացի՝ նախագծման (ներառյալ հետազոտությունները), շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման ընթացքում սույն Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական պահանջները նաեւ չեն տարածվում բնակավայրերի փողոցների նկատմամբ:

6. Ավտոմոբիլային ճանապարհը տեսողականորեն նույնականացվում է որպես օբյեկտ, որը սարքավորված կամ հարմարեցված եւ վերգետնյա տրանսպորտային միջոցների երթելեկության համար օգտագործվող հողաշերտ կամ արհեստական կառույցի մակերեսույթ է: Սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառման համար ավտոմոբիլային ճանապարհները նույնականացվում են ըստ դասերի եւ տեխնիկական կատեգորիաների ըստ հետեւյալ հատկանիշների՝

ա) ըստ դեպի դրանց տրանսպորտային միջոցների հասանելիության.

բ) ըստ երթելեկության գոտիների քանակի եւ լայնության.

գ) ըստ կենտրոնական բաժանարար գոտու առկայության.

դ) ըստ այլ ավտոմոբիլային ճանապարհների, երկաթուղիների, տրամվայի գծերի, հեծանվային եւ հետիոտնային ուղիների հետ հատման տեսակների:

Մաքսային միության անդամ պետությունների ընդհանուր օգտագործման բոլոր ավտոմոբիլային ճանապարհները պետք է ունենան անվանում՝ սկզբնակետի, վերջնակետի, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ միջանկյալ կետերի նշումով, ինդեքս եւ համար՝ համաձայն Մաքսային միության անդամ պետություններում հաստատված՝ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներն ըստ դրանց նշանակության, դասի եւ կատեգորիայի նշելու եւ դրանց անվանում, ինդեքս ու հերթական համար շնորհելու կարգի:

Միջազգային տրանսպորտային ցանցի կազմում ընդգրկվող ավտոմոբիլային ճանապարհների անվանումները եւ նույնականացման համարները սահմանվում են միջազգային պայմանագրերով:

Հոդված 2. Սահմանումները

7. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետևյալ եզրույթները եւ դրանց սահմանումները՝

«ավտոմոբիլային ճանապարհ»՝ կառուցվածքային տարրերի համալիր, որոնք նախատեսված են ուղեորների եւ (կամ) բեռների փոխադրումներ իրականացնող ավտոմեքենաների եւ այլ վերգետնյա տրանսպորտային միջոցների սահմանված արագություններով, բեռնվածքներով եւ եզրաչափերով երթելու համար, ինչպես նաեւ դրանց տեղաբաշխման համար տրամադրված հողամասեր.

«ճանապարհային երթելելության անվտանգություն»՝ ճանապարհային երթելելության վիճակ, որն արտացոլում է դրա մասնակիցների պաշտպանվածության աստիճանը ճանապարհատրանսպորտային պատահարներից եւ դրանց հետեւանքներից.

«մոտեցման եզրաչափ»՝ հարթությունում ազատ տարածության սահմանային լայնական ուրվագիծը, որն ուղղահայաց է երթելելի մասի երկայնական առանցքին, որի մեջ չպետք է մտնի կառույցի որեւէ տարր կամ դրանց վրա տեղակայված այլ սարքվածքներ.

«ավտոմոբիլային ճանապարհի ախտորոշում (տեխնիկական վիճակի գնահատում)»՝ ավտոմոբիլային ճանապարհի եւ ճանապարհային կառույցների կառուցվածքային տարրերի հարաչափերի եւ վիճակի, տրանսպորտային հոսքերի բնութագրերի վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ այլ տեղեկության զննում, հավաքագրում եւ վերլուծություն վերանորոգման կարիքի որոշման, ինչպես նաեւ ավտոմոբիլային ճանապարհի հետագա շահագործման ընթացքում դրա վիճակի գնահատման եւ կանխատեսման համար.

«հասանելիություն ավտոմոբիլային ճանապարհին»՝ նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ տրանսպորտային միջոցների ավտոմոբիլային ճանապարհ մուտք գործելու հնարավորություն հատող կամ հարող ավտոմոբիլային ճանապարհներից եւ դրանից՝ դեպի նշված ճանապարհներ ցած

իջնելը.

«ճանապարհային երթեւեկություն»՝ տրանսպորտային միջոցների օգնությամբ կամ առանց դրանց մարդկանց կամ բեռների տեղափոխում ավտոմոբիլային ճանապարհների սահմաններում.

«ճանապարհային նշան»՝ երթեւեկության կազմակերպման տեխնիկական միջոց տարբերանշումներով եւ (կամ) մակագրություններով, որոնք տեղեկացնում են ճանապարհային երթեւեկության մասնակիցներին ճանապարհային պայմանների եւ երթեւեկության ռեժիմի, բնակավայրերի եւ այլ օբյեկտների դիրքի մասին.

«ճանապարհային պատվածք»՝ ավտոմոբիլային ճանապարհի կառուցվածքային տարր, որն իր վրա է վերցնում տրանսպորտային միջոցներից գոյացող բեռնվածքը եւ հաղորդում այն հողային պաստառին.

«ճանապարհային գծանշում»՝ ավտոմոբիլային ճանապարհի երթեւեկելի մասի, արհեստական կառույցների եւ ճանապարհների սարքավորվածության տարրերի վրա գծեր, մակագրություններ եւ այլ տարբերանշումներ, որոնցով երթեւեկության մասնակիցները տեղեկացվում են ճանապարհի հատվածում երթեւեկության պայմանների եւ ռեժիմների մասին.

«ճանապարհային պաշտպանակ»՝ սարքվածք, որը նախատեսված է տրանսպորտի՝ բախման նվազագույն ռիսկերով եւ ճանապարհներից վայրէջքներով երթեւեկության ապահովման, բաժանարար գոտու վրայով գծանցի, հանդիպական տրանսպորտային միջոցի հետ բախման, ճանապարհի արտուղման գոտում ճամփեզրի, բաժանարար գոտու վրա տեղակայված զանգվածային արգելքների եւ կառույցների վրաերթի կանխման, ճանապարհից կամ կամրջային կառույցից հետիոտների վայր ընկնելու ռիսկի նվազեցման, ինչպես նաեւ հետիոտների շարժման կանոնավորման եւ կենդանիների կողմից երթեւեկելի մաս դուրս գալու կանխման համար նախատեսված սարք.

«ճանապարհային լուսացույց»՝ տրանսպորտային միջոցների եւ հետիոտների

բացթողման հերթականության կարգավորման համար կիրառվող լուսազդանշանային սարքվածք.

«ճանապարհային կառույց»՝ ավտոմոբիլային ճանապարհի հատման վայրերում բնական եւ արհեստական արգելքի հետ տրանսպորտային միջոցների, հետիոտների, կենդանիների բացթողման համար ճարտարագիտական (արհեստական) կառույց (կամուրջ, ուղանցույց, էստակադ, թունել, ջրաթողանցման խողովակ եւ այլն).

«կենսական պարբերաշրջան»՝ ժամանակահատված, որի ընթացքում կատարվում է գործընթացների ամբողջությունը ավտոմոբիլային ճանապարհի նախագծման պահից՝ ներառյալ շինարարությունը (կառուցումը) եւ պահպանումը՝ մինչեւ դրա օգտահանումը (վերացումը).

«հողային պաստառ»՝ կառուցվածքային տարր, որը հիմք է ծառայում ճանապարհային պատվածքի, ինչպես նաեւ ճանապարհային երթելելության կազմակերպման տեխնիկական միջոցների տեղաբաշխման եւ ավտոմոբիլային ճանապարհի սարքավորվածության համար.

«ճարտարագիտական հետազոտություններ»՝ ավտոմոբիլային ճանապարհի նախագծման շրջանի բնական եւ տեխնաժին պայմանների համալիր ուսումնասիրման գործընթաց, հիմնավորված նախագծային որոշումների ընդունման համար անհրաժեշտ նյութերի հավաքագրում.

«երթելելության ինտենսիվություն»՝ ժամանակի միավորի ընթացքում (մեկ օրվա կամ ժամվա ընթացքում) ավտոմոբիլային ճանապարհի լայնական հատվածքով անցնող տրանսպորտային միջոցների քանակ.

«կատարողական փաստաթղթեր»՝ տեքստային եւ գրաֆիկական նյութեր, որոնք արտացոլում են շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման ընթացքում նախագծային որոշումների փաստացի կատարումը եւ կապիտալ շինարարության օբյեկտների եւ դրանց տարրերի փաստացի վիճակը՝ նախագծային փաստաթղթերում որոշված աշխատանքներին համապատասխան.

«ավտոմոբիլային ճանապարհի հիմնական վերանորոգում»՝ ավտոմոբիլային ճանապարհի, ճանապարհային կառույցների եւ (կամ) դրանց մասերի կառուցվածքային տարրերի փոխարինման եւ (կամ) վերականգնման աշխատանքների համալիր, որոնց կատարումն իրականացվում է ավտոմոբիլային ճանապարհի դասի եւ կատեգորիայի սահմանված թույլատրելի արժեքների ու տեխնիկական բնութագրերի սահմաններում, եւ որոնց կատարման ժամանակ շոշափվում են ավտոմոբիլային ճանապարհի հուսալիության ու անվտանգության կառուցվածքային եւ այլ բնութագրեր եւ չեն փոփոխվում ավտոմոբիլային ճանապարհի արտուղման գոտու սահմաններն ու դրա երկրաչափական տարրերը.

«ավտոմոբիլային ճանապարհի կատեգորիա»՝ ավտոմոբիլային ճանապարհի տեխնիկական պարամետրերը որոշող բնութագիր.

«ավտոմոբիլային ճանապարհի դաս»՝ ավտոմոբիլային ճանապարհի բնութագիր դեպի դրան մուտքի հնարավորության պայմանով.

«կառուցվածքային տարր»՝ կառուցվածք, որն ընդունում է արտաքին եւ ներքին բեռնվածքն ու հաղորդում դրանք այդ կառուցվածքներին կամ հիմքին.

«խոշորագույն տրանսպորտային միջոց»՝ բեռով կամ առանց բեռի տրանսպորտային միջոց, որի եզրաչափերը բարձրությամբ, լայնությամբ եւ երկարությամբ գերազանցում են սահմանային թույլատրելի արժեքները.

«ուղղորդիչ սարքվածքներ»՝ ճանապարհային երթելիության մասնակիցների տեսողական կողմնորոշման համար նախատեսված տեխնիկական սարքեր.

«ճանապարհամերձ սպասարկման օբյեկտներ»՝ արտուղման գոտու սահմաններում զետեղված եւ ճանապարհային երթելիության մասնակիցների համար նախատեսված շենքեր եւ շինություններ (ավտոբուսների կանգառման կետեր, այդ թվում՝ տաղավարներով, տրանսպորտային միջոցների կարճաժամկետ կանգառման հրապարակներ, տրանսպորտային միջոցների

կայանատեղիներով հանգստի հրապարակներ, վթարականչային կապի սարքվածքներ եւ այլ կառուցվածքներ)։

«ճանապարհամերձ սպասարկման օբյեկտներ»՝ շենքեր եւ կառույցներ, որոնք զետեղված են ճանապարհամերձ գոտու վրա եւ նախատեսված են ընթացուղում ճանապարհային երթելեկության մասնակիցների սպասարկման համար (մոթելներ, հյուրանոցներ, ճամբարային բնակատեղիներ, տեխնիկական սպասարկման կայաններ, ավտոլիցքավորման կայաններ, սննդի, առեւտրի, կապի, բժշկական օգնության կետեր, ավտոլվացման կետեր, գովազդի միջոցներ եւ այլ կառույցներ)։

«ճամփեզր»՝ ճանապարհի տարր, որը միանում է անմիջապես երթելեկելի մասին եւ նախատեսված է հողային պաստառի կայունության ապահովման, ճանապարհային երթելեկության անվտանգության բարձրացման, հետիոտների եւ հեծանվորդների երթելեկության կազմակերպման, ինչպես նաեւ արտակարգ իրավիճակներում օգտագործելու համար։

«մնացորդային ռիսկ»՝ ձեռնարկած պաշտպանիչ միջոցներից հետո մնացող ռիսկ։

«հանգստյան հրապարակ»՝ ավտոմոբիլային ճանապարհի սարքավորվածության տարր, որը նախատեսված է վարորդների եւ ուղեւորների կարճաժամկետ հանգստի, տրանսպորտային միջոցների եւ բեռների վիճակի ստուգման, մանր անսարքությունների վերացման համար։

«ավտոմոբիլային ճանապարհի արտուղման գոտի»՝ հողամասեր (հողի կատեգորիայից անկախ), որոնք նախատեսված են ավտոմոբիլային ճանապարհի, ճանապարհային կառույցների կառուցվածքային տարրերի տեղակայման համար եւ որոնց վրա զետեղված են կամ կարող են զետեղվել ճանապարհային սպասարկման օբյեկտներ։

«ավտոմոբիլային ճանապարհի ճանապարհամերձ գոտի»՝ հողամասեր, որոնք երկու կողմից միանում են ավտոմոբիլային ճանապարհի արտուղման

գոտուն եւ որոնց սահմաններում դրանց օգտագործման հատուկ ռեժիմ է սահմանվում՝ ճանապարհային երթելեկության անվտանգության պահանջների, ինչպես նաեւ ավտոմոբիլային ճանապարհի վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման նորմալ պայմանների, դրա պահպանումն ապահովելու նպատակներով՝ հաշվի առնելով ավտոմոբիլային ճանապարհի զարգացման հեռանկարները.

«նախագծային փաստաթղթեր»՝ ավտոմոբիլային ճանապարհների եւ ճանապարհային կառույցների շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման, շահագործման վերաբերյալ ինժեներատեխնիկական, ճարտարապետական, տեխնոլոգիական, կառուցվածքային, տնտեսական, ֆինանսական եւ այլ որոշումներ պարունակող փաստաթղթեր.

«կատարված աշխատանքների ընդունում»՝ նախագծային փաստաթղթերին ընդունվող օբյեկտի (աշխատանքի) համապատասխանության չափանիշների որոշման եւ գնահատման ընթացակարգերի ամբողջություն.

«ավտոմոբիլային ճանապարհի նախագծում»՝ նախագծակոնստրուկտորական աշխատանքների ու տնտեսական հաշվարկների համալիրից բաղկացած եւ ճարտարագիտական հետազոտությունների նյութերով իրականացվող արտադրական գործընթաց.

«ավտոմոբիլային ճանապարհի երթելեկելի մաս»՝ տրանսպորտային միջոցների երթելեկության համար նախատեսված ավտոմոբիլային ճանապարհի կառուցվածքային տարր.

«տեսանելիության հեռավորություն»՝ հեռավորությունը մարդատար տրանսպորտային միջոցի առջեւի մասից, որի վրա վարորդի նստատեղից տարբերվում են ճանապարհի կառուցվածքային տարրերը եւ այլ առարկաներ երթելեկության ուղղությամբ, որոնց նկատմամբ կողմնորոշումը թույլ է տալիս վարել տրանսպորտային միջոցը համապատասխան գոտիով.

«բաժանարար գոտի»՝ տրանսպորտային հոսքերը ըստ երթելեկության

ուղղությունների եւ կազմի բաժանող ավտոմոբիլային ճանապարհի կառուցվածքային տարր.

«ավտոմոբիլային ճանապարհի վերակառուցում»՝ աշխատանքների համալիր, որոնց կատարման ժամանակ իրականացվում է ավտոմոբիլային ճանապարհի, դրա հատվածների պարամետրերի փոփոխություն, որը հանգեցնում է ավտոմոբիլային ճանապարհի դասի եւ (կամ) կատեգորիայի փոփոխությանը, կամ հետեւանք է առաջացնում ավտոմոբիլային ճանապարհի արտուղման գոտու սահմանի փոփոխության.

«ավտոմոբիլային ճանապարհի պահպանություն»՝ ավտոմոբիլային ճանապարհի տեխնիկական վիճակի պահպանմանը, ինչպես նաեւ ճանապարհային երթեւեկության անվտանգության կազմակերպմանը եւ ապահովմանն ուղղված աշխատանքների համալիր.

«ավտոմոբիլային ճանապարհի պահպանվածություն»՝ որպես տեխնիկական կառույց եւ գույքային համալիր ավտոմոբիլային ճանապարհի ամբողջականության վիճակ, որն ապահովում է դրա շահագործման հատկությունների պահպանումը եւ անվտանգ օգտագործումը.

«ավտոմոբիլային ճանապարհի շինարարություն»՝ ավտոմոբիլային ճանապարհ կառուցելու տեխնոլոգիական, ենթակառուցվածքային եւ կառավարչական գործընթացների համալիր.

«շինարարական (արտադրական) հսկողություն»՝ նախագծային փաստաթղթերին եւ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին կատարվող աշխատանքների համապատասխանության հսկողություն, որն անցկացվում է ավտոմոբիլային ճանապարհի շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման ընթացքում.

«ավտոմոբիլային ճանապարհի ընթացիկ վերանորոգում»՝ ավտոմոբիլային ճանապարհի տրանսպորտաշահագործման բնութագրերի վերականգնմանն ուղղված աշխատանքների համալիր, որոնց կատարման ժամանակ չեն

փոփոխվում ավտոմոբիլային ճանապարհի հուսալիության եւ անվտանգության կառուցվածքային եւ այլ բնութագրեր.

«ճանապարհային երթելեկության կազմակերպման տեխնիկական միջոցներ»՝ ճանապարհային երթելեկության անվտանգության ապահովման եւ ճանապարհի թողունակության բարձրացման համար ճանապարհներին կիրառվող սարքվածքների, կառույցների եւ պատկերների համալիր.

«ավտոմոբիլային ճանապարհի տրանսպորտաշահագործման ցուցանիշներ»՝ ճանապարհի զննության պահին՝ դրա տեխնիկական մակարդակի եւ շահագործման վիճակի ցուցանիշների փաստացի արժեքների համալիր.

«ծանրաքարշ տրանսպորտային միջոց»՝ բեռով կամ առանց բեռի տրանսպորտային միջոց, որի ընդհանուր ծավալը եւ (կամ) մեկ առանցքին բաժին ընկնող ծավալը գերազանցում է սահմանված թույլատրելի արժեքները.

«սահմանափակ կարողություններով ճանապարհային երթելեկության մասնակիցներ»՝ տրանսպորտային միջոցների վարորդներ կամ հետիոտներ, որոնք դժվարություններ ունեն ինքնուրույն տեղաշարժման, ծառայության, անհրաժեշտ տեղեկության ստացման ժամանակ կամ տարածության մեջ կողմնորոշվելիս.

«ավտոմոբիլային ճանապարհի շահագործում»՝ ավտոմոբիլային ճանապարհի ընթացիկ վերանորոգման եւ պահպանման միջոցառումների համալիր, որն իրականացվում է դրա անվտանգության պահպանման նպատակներով ավտոմոբիլային ճանապարհի անվտանգ՝ ուղիղ նշանակությամբ օգտագործման համար.

«սարքավորվածության տարրեր»՝ երթելեկության սպասարկման շենքերի եւ կառույցների, տեխնիկական միջոցների ու սարքվածքների համալիր՝ նախատեսված ճանապարհային երթելեկության անվտանգության կազմակերպման եւ ապահովման համար:

Հոդված 3. Անվտանգության պահանջներ

8. Ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց վրայի կառույցների, ինչպես նաեւ դրանց հետ կապված նախագծման (ներառյալ հետազոտությունները), շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման գործընթացների անվտանգությունն ապահովվում է պարամետրերի նախագծային արժեքների անվտանգության համապատասխան պահանջների, այդ թվում՝ ծառայության ամբողջ ժամկետում տրանսպորտային միջոցների քաշային եւ եզրաչափային թույլատրելի պարամետրերի, ինչպես նաեւ ամրության, հուսալիության եւ կայունության տարրերի ցուցանիշների սահմանման ու պահպանման միջոցով:

9. Սույն Տեխնիկական կանոնակարգը, հաշվի առնելով վնաս հասցնելու ռիսկի աստիճանը, սահմանում է ավտոմոբիլային ճանապարհների նկատմամբ նվազագույն անհրաժեշտ պահանջները, որոնց կատարմանը հասնում են հետազոտությունների, նախագծման, շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման ընթացքում:

10. Ավտոմոբիլային ճանապարհների եւ կառույցների հետազոտությունների ժամանակ դրանցում պետք է պահպանվեն հետեւյալ պահանջները՝

10.1 շինարարության շրջանի բնակլիմայական պայմանների եւ շրջակա միջավայրի վրա տեխնաժին ազդեցության գործոնների մասին նյութերը դրանց փոփոխման կանխատեսման հետ միասին պետք է լինեն արժանահավատ.

10.2 տեղագրաերկրաբաշխական, ճարտարագետաերկրաբանական, ջրաբանական, էկոլոգիական, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ այլ տեսակի հետազոտական աշխատանքների նյութերը պետք է պարունակեն բոլոր անհրաժեշտ տվյալները՝

ա) ավտոմոբիլային ճանապարհի եւ ճանապարհային կառույցների կառուցվածքային տարրերի մասով հիմնական տեխնիկական որոշումների մշակման համար, որոնք ապահովում են անվտանգությունը դրանց

շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման փուլերում, ինչպես նաեւ շրջակա միջավայրի պահպանության համար միջոցառումների, շինարարության կազմակերպման նախագծի մշակման համար.

բ) ճանապարհային շինությունների հիմնատակերի, հիմքերի եւ կառուցվածքների, կամուրջների եւ խողովակների անցքերի, հողային պաստառի, ճանապարհային պատվածքի եւ այլ կառուցվածքային տարրերի ամրության ու կայունության հաշվարկներ կատարելու համար, ինչպես նաեւ ավտոմոբիլային ճանապարհի նախագծման, շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման փուլերում դրա անվտանգության հետ կապված այլ միջոցառումների մշակման համար.

գ) ճանապարհի շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման փուլերում վտանգավոր բնական եւ տեխնածին գործոնների ներգործությունից ավտոմոբիլային ճանապարհի եւ տրանսպորտային ծառայություններից օգտվողների պաշտպանությանն ուղղված ճարտարագիտական միջոցառումների նախագծման համար:

11. Ավտոմոբիլային ճանապարհների եւ ճանապարհային կառույցների նախագծման ժամանակ դրանցում պետք է պահպանվեն հետտեսյալ պահանջները՝

11.1 ավտոմոբիլային ճանապարհների նախագծումն անցկացվում է նախագծման առաջադրանքի պահանջների, պատվիրատուի կողմից տրամադրված ելակետային տվյալների եւ ճարտարագիտական հետազոտությունների հիման վրա.

11.2 ավտոմոբիլային ճանապարհների նախագծման ժամանակ հարկավոր է ապահովել՝

ա) սահմանված քաշային պարամետրերը եւ եզրաչափքային չափսեր ունեցող տրանսպորտային միջոցների անվտանգ եւ անխափան երթեւեկությունը երթեւեկության թույլատրելի արագություններով տրանսպորտային հոսքերի առկա եւ հեռանկարային ժամանակահատվածի համար սահմանված կանխատեսվող

ինտենսիվության դեպքում՝ հաշվի առնելով երթելեկության առկա եւ կանխատեսվող կազմը.

բ) ավտոմոբիլային ճանապարհի եւ ճանապարհային կառույցների ամրությունն ու կայունությունը ներքին եւ արտաքին սահմանված բեռնվածքների ներգործության դեպքում դրանց կենսական պարբերաշրջանի բոլոր փուլերում.

գ) ջրաթողանցող կառույցների միջոցով ավտոմոբիլային ճանապարհի սահմանված կենսական պարբերաշրջանի ընթացքում հաշվարկային հավանականությունը գերազանցող հեղեղաջրերի եւ սառցահոսանքի անվտանգ բացթողումը.

դ) ավտոմոբիլային ճանապարհի սահմանված կենսական պարբերաշրջանի ընթացքում շինարարական եւ շահագործման ծախսերի օպտիմալացումը.

ե) տրանսպորտային ենթակառուցվածքի օբյեկտների նկատմամբ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված՝ գեղագիտական, տնտեսական, էկոլոգիական եւ այլ պահանջների, ինչպես նաեւ պատմամշակութային ժառանգության հուշարձանների եւ զոհված զինվորների թաղման վայրերի պահպանվածության ապահովման նորմերի եւ կանոնների պահպանումը.

զ) նվազագույն հեռավորությունների պահպանումը մինչեւ պայթուցանավտանգ, հրդեհավտանգ եւ այլ արտադրական օբյեկտներին կից արգելված (վտանգավոր) գոտիները եւ շրջանները, ինչպես նաեւ մինչեւ նախագծվող ավտոմոբիլային ճանապարհի կողքին տեղակայված օբյեկտների պահպանական գոտիները.

է) համատեղել բավականաչափ երկարությամբ հատվածներում ճանապարհի բնութագրերի օրինաչափ եւ սահուն փոփոխությունը, ինչպես նաեւ երթելեկության պայմանների կտրուկ փոփոխման վայրերը ճարտարապետական, ռելիեֆային եւ լանդշաֆտային դոմինանտների, բնակավայրերի, տրանսպորտային ուղեբաժանքների եւ ճանապարհի այլ տարրերի ու ճանապարհամերձ պայմանների հետ, որոնց մոտենալիս ճանապարհային

երթեւեկության մասնակիցները կարող են կանխատեսել այդ փոփոխությունները.

ը) շրջակա միջավայրի աղտոտման կրճատում, այդ թվում՝ խցանումներում ավտոմեքենաների հարկադրված պարապուրդի նվազեցման հաշվին ջերմոցային գազերի արտանետման կրճատում.

11.3 ավտոմոբիլային ճանապարհների նախագծման ժամանակ այն գոտիներում, որտեղ հնարավոր չէ բացառել վտանգավոր բնական եւ տեխնաժին գործընթացների ու երեւոյթների ներգործության հետ կապված ռիսկերը, հարկավոր է՝

ա) անցկացնել ավտոմոբիլային ճանապարհի մայրուղին տեղանքի այն հատվածներով, որտեղ նշված ռիսկերը նվազագույնն են.

բ) նախատեսել շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման փուլերում նշված գործընթացների եւ երեւոյթների ներգործության հնարավոր մնացորդային ռիսկերից ավտոմոբիլային ճանապարհի կառուցվածքային տարրերի պաշտպանություն.

գ) կիրառել նշված գործընթացների եւ երեւոյթների ներգործության դեպքում վտանգի առաջացման ռիսկը վերացնող կամ նվազեցնող նյութեր եւ կառուցվածքներ.

11.4 ավտոմոբիլային ճանապարհների, ճանապարհային կառուցվածքների եւ ճանապարհային կառույցների կառուցվածքային տարրերի հաշվարկման ժամանակ պետք է հաշվի առնվեն նշված տարրերի, ինչպես նաեւ դրանց հիմնատակերի եւ հիմքերի վրա ազդող մշտական եւ ժամանակավոր բեռնվածքների հետեւյալ հիմնական տեսակները՝

ա) ավտոմոբիլային ճանապարհի եւ ճանապարհային կառույցների կառուցվածքային տարրերի սեփական քաշից.

բ) տրանսպորտային միջոցներից եւ հետիոտներից.

գ) ջրային հոսքի ներգործությունից, այդ թվում՝ ալիքային եւ սառցային

բեռնվածքներ.

դ) քամու եւ մթնոլորտային տեղումների ներգործությունից.

ե) սեյսմիկ ներգործությունից.

զ) ջերմաստիճանային ներգործությունից.

է) հիմնատակերի եւ հիմքերի նստվածքից, կառուցվածքային տարրերի նյութի կծկումից.

ը) շինմոնտաժային, տեխնոլոգիական, վերանորոգման եւ շահագործման սարքավորումներից.

11.5 անվտանգության պահանջները ավտոմոբիլային ճանապարհի մայրուղու նկատմամբ՝

ա) հատակագծի երկրաչափական տարրերի, երկայնական եւ լայնական պրոֆիլի պարամետրերը պետք է նշանակվեն՝ ավտոմոբիլային ճանապարհի տվյալ կատեգորիայի համար ընդունված տրանսպորտային միջոցների երթելեկության հաշվարկային արագությունից ելնելով.

բ) երթելեկության անվտանգ պայմաններ ապահովող հաշվարկային արագությունների փոփոխման թույլատրելի ընդգրկույթը սահմանվում է տարբերակված կերպով ավտոմոբիլային ճանապարհի յուրաքանչյուր կատեգորիայի համար.

գ) հատակագծում եւ երկայնական պրոֆիլում ավտոմոբիլային ճանապարհի նախագծումը հարկավոր է իրականացնել որպես տարածական կոր, որի տարրերը ներդաշնակորեն զուգակցվում են միմյանց եւ տեղանքի շրջակա լանդշաֆտի հետ. Ընդ որում, հարկավոր է նախատեսել ուղղագիծ եւ կորագիծ կտորների համաչափությունն ըստ դրանց երկարության՝ ավտոմոբիլային ճանապարհի հարակից հատվածներում եւ ամբողջ երկայնությամբ:

դ) երկայնական թեքվածքը պետք է ապահովի տրանսպորտային միջոցների երթելեկության թույլատրելի արագությունների անվտանգ իրականացման

հնարավորությունը ավտոմոբիլային ճանապարհների համապատասխան դասերի եւ կատեգորիաների ու երթելեկության պայմանների համար: Ճանապարհների թողունակության եւ ճանապարհային երթելեկության անվտանգության բարձրացման նպատակներով սահմանային երկայնական թեքվածքների կիրառման անհրաժեշտության դեպքում հարկավոր է նախատեսել լրացուցիչ գոտիների եւ վթարային իջատեղերի կառուցվածքը:

ե) հատակագծում եւ երկայնական պրոֆիլում մայրուղու տարրերի զուգակցումը պետք է ապահովի հեռավորության վրա ավտոմոբիլային ճանապարհի ուղղության միանշանակ տեսողական ընկալումը, որն ապահովում է թույլատրված արագությամբ անվտանգ եւ հարմարավետ երթելեկելը, երթելեկության ուղղության փոփոխման, վարման ընթացքում բարձր ուշադրություն պահանջող վայրերին մոտենալու մասին վարորդներին ժամանակին տեղեկացնելը, պետք է բացառեն տեսողական պատրանքների առաջացման եւ վարորդների սխալ գործողությունների հնարավորությունը:

զ) հատակագծի եւ երկայնական պրոֆիլի պարամետրերը պետք է ապահովեն երթելեկելի մասի մակերեսի եւ հանդիպական ավտոմեքենայի տեսանելիությունը ավտոմոբիլային ճանապարհների համապատասխան կատեգորիաների համար սահմանվածից ոչ պակաս հեռավորության վրա:

է) կորերը հատակագծում պետք է ապահովեն մայրուղու տեսողական սահունությունը եւ դրա կապվածությունը տեղանքի շրջակա լանդշաֆտի հետ: Դրանք կարող են ունենալ մշտական կամ փոփոխական կորություն: Կորերի փոքրագույն շառավիղները պետք է նշանակվեն՝ ելնելով երթելեկության հարմարավետությունից եւ բարեհարմարությունից, իսկ նեղ պայմաններում՝ մաքուր եւ խոնավ ճանապարհային պատվածքով հաշվարկային արագությամբ երթելեկելու ժամանակ ավտոմեքենայի կայունությունից: Հատակագծում հարակից կորերի շառավիղները չպետք է միմյանցից 1,3 անգամից ավելի տարբերվեն:

11.6 ավտոմոբիլային ճանապարհը պետք է ունենա երթելեկության գոտիների սահմանված թվաքանակ, որը թույլ է տալիս ապահովել հաշվարկային ինտենսիվությամբ տրանսպորտային հոսքի բացթողում՝ ավտոմոբիլային ճանապարհի բեռնվածության թույլատրելի մակարդակով.

11.7 երթելեկության գոտու լայնությունը պետք է ապահովի տարբեր նշանակության, դասի եւ կատեգորիայի ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաեւ տրանսպորտային միջոցների տեսակների համար որոշակի ճանապարհային պայմաններում թույլատրելի երթելեկության արագության անվտանգ իրականացման հնարավորություն.

11.8 բոլոր կատեգորիաների ճանապարհների համար պետք է նախատեսել ճամփեզրերի կառուցվածքը, որոնց լայնությունը հարկավոր է նշանակել՝ ելնելով ապահովման պայմաններից՝

ա) հողային պաստառի կառուցվածքի կայունություն.

բ) տարածության ստեղծում, որը թույլ է տալիս խուսափել կամ նվազեցնել ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքների ծանրությունը.

գ) տարբեր դասերի եւ կատեգորիաների ճանապարհների, ինչպես նաեւ տրանսպորտային միջոցների տեսակների համար երթելեկության թույլատրելի արագությունների իրականացում.

դ) հնարավորություն համապատասխան կատեգորիաների ճանապարհների երթելեկելի մասի սահմաններից դուրս տրանսպորտային միջոցների կարճաժամկետ կանգառման համար՝ չստեղծելով խոչընդոտներ շարժվող տրանսպորտային հոսքի համար.

11.9 ավտոմոբիլային ճանապարհներին՝ կախված ճանապարհի դասից եւ կատեգորիայից, ինչպես նաեւ այլ ավտոմոբիլային ճանապարհների հատվածներում, որտեղ արգելված են ավտոմեքենաների կանգառումը եւ կայանումը, պետք է նախագծվեն հրապարակներ՝ մեքենաների վթարային կանգառման համար եւ ունենան կանխատեսվող ավտոմեքենաների թվաքանակի

տեղավորման համար բավարար չափսեր: Հրապարակները պետք է սարքավորված լինեն անցումա-արագային գոտիներով, իսկ հեռավորությունները դրանց միջև հարկավոր է սահմանել՝ կախված ճանապարհով երթելակության ինտենսիվությունից.

11.10 ուղղաձիգ երկարաձիգ գառիվայրերի վրա վայրէջք կատարող տրանսպորտային միջոցների երթելակության գոտու երկայնությամբ տրանսպորտային միջոցների երթելակության անվտանգության ապահովման համար պետք է նախատեսված լինեն արտակարգ դեպքերում հարկադրական կանգառման հրապարակներ, որոնք տեղակայված կլինեն սահմանված միջակայքերից հետո.

11.11 տրանսպորտային միջոցի՝ հանդիպական երթելակության գոտի դուրս գալու կանխման եւ ճակատային բախման ռիսկի նվազեցման նպատակով համապատասխան կարգի եւ կատեգորիայի ավտոմոբիլային ճանապարհները պետք է ունենան բաժանարար գոտի կամ նախագծվեն երթելակության յուրաքանչյուր ուղղության համար ինքնուրույն հողային պաստառի վրա: Բաժանարար գոտու նվազագույն լայնությունը, կախված ավտոմոբիլային ճանապարհի կարգից եւ կատեգորիայից, պետք է ունենա անվտանգության գոտիների տեղավորման եւ ճանապարհային պաշտպանակների տեղադրման համար անհրաժեշտ չափսեր: Բաժանարար գոտու նախագծման ժամանակ պետք է ապահովվեն երթելակելի մասից անվտանգ ջրահեռացման պայմանները.

11.12 երթելակելի մասի եւ ավտոմոբիլային ճանապարհի ճամփեզրերի երկայնական թեքվածքը պետք է ապահովի մակերեսության ջրահոսը.

11.13 ավտոմոբիլային ճանապարհի նախագծային փաստաթղթերում ընդունված ճանապարհային պատվածքի կառուցվածքի տեսակը եւ կրողունակությունը պետք է համապատասխանեն տարբեր դասերի եւ կատեգորիաների ավտոմոբիլային ճանապարհներով երթելակության թույլատրված արագությամբ՝ տրված ինտենսիվությամբ եւ կազմով

տրանսպորտային հոսքերի անվտանգ եւ անխափան բացթողման պահանջներին՝ հաշվի առնելով Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված տրանսպորտային միջոցների ժամանակակից քաշային պարամետրերը: Ճանապարհային պատվածքի հարթության եւ կցորդման որակների ցուցանիշները պետք է համապատասխանեն տարբեր դասերի եւ կատեգորիաների ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցների անվտանգ՝ թույլատրված արագությամբ երթելու պահանջներին:

11.14 ավտոմոբիլային ճանապարհների նախագծման ժամանակ ավտոմոբիլային ճանապարհին երթելու կազմակերպման տեխնիկական միջոցները պետք է կազմեն ճանապարհային երթելու կառավարման միասնական համակարգ, որը թույլ է տալիս վարորդին ապահովել անվտանգ հնարքաբանեցում կամ երթելու ռեժիմի փոփոխում:

11.15 ավտոմոբիլային ճանապարհների նախագծման ժամանակ պետք է նախատեսվեն ճանապարհային պահող պաշտպանակներ ճանապարհատրանսպորտային պատահարների հնարավոր առաջացման պոտենցիալ վտանգավոր վայրերում՝

ա) ավտոմոբիլային ճանապարհի հատվածներում, բարձր լիքաթմբերով եւ (կամ) հողային պաստառի զառիթափ շեպերով, ինչպես նաեւ երկաթուղիների, ճահիճների, ձորակների, ջրի հոսքերի, լեռնային կիրճերի եւ լանջերի երկայնությամբ անցնող մերձակա դասավորության դեպքում:

բ) ավտոմայրուղիներում եւ արագընթաց ճանապարհներին, ինչպես նաեւ բազմագոտի ավտոմոբիլային ճանապարհների բաժանարար գոտում, տրանսպորտային ուղեբաժանքներում, ոչ բավարար տեսանելիությամբ հատակագծի կորերում:

գ) կամուրջներով, ուղանցույցներով, էստակադներով եւ ճանապարհային այլ հատուկ կառույցներով անցնող հատվածներում:

դ) ուղանցույցների, էլեկտրահաղորդման, կապի գծերի, լուսավորության

հենարանների, անհատական կատարման առանձին ճանապարհային նշանների, ինչպես նաև երթելեկելի մասից անմիջական մոտիկությամբ տեղակայված կառուցվածքների եւ կառույցների մոտ.

11.16 բնակավայրերով անցնող ավտոմոբիլային ճանապարհների նախագծման ժամանակ պետք է նախատեսվեն հետիոտնային ուղիներ կամ մայթեր, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հեծանվային ուղիներ: Հետիոտնային եւ հեծանվային ուղիները պետք է նախագծվեն, անհրաժեշտության դեպքում, նաև բնակավայրերից դուրս կառուցվող կամ վերակառուցվող ավտոմոբիլային ճանապարհների երկայնքով: Ընդ որում, թույլ է տրվում կազմակերպել մեկ երթելեկելի մասով հեծանվային եւ ավտոմոբիլային համատեղ երթելեկություն՝ կախված երթելեկության թույլատրելի արագությունից, ինտենսիվությունից եւ կազմից, ինչպես նաև հեծանվային ու ավտոմոբիլային երթելեկության բաժանման միջոցներ եւ այլն.

11.17 նոր կառուցվող ավտոմոբիլային ճանապարհների նախագծման կամ ավտոմոբիլային ճանապարհների առկա ցանցի վրա արհեստական լուսավորության ստեղծման ժամանակ արհեստական լուսավորությունը պետք է նախատեսվի առաջին հերթին՝

ա) բնակավայրերի սահմաններում.

բ) մայրուղային ավտոմոբիլային ճանապարհների՝ միմյանց միջեւ եւ երկաթուղիների հետ փոխհատման վրա.

գ) 100 մ երկար կամուրջների, ուղանցույցների եւ էստակադների վրա.

դ) վճարովի ավտոմոբիլային ճանապարհներով ուղեորավարձերի գանձման կետերում.

ե) թունելներում եւ դրանց մատույցներում.

զ) ճանապարհային եւ ճանապարհամերձ սպասարկման կառույցների եւ օբյեկտների մուտքերում.

է) տրանսպորտային եւ քաշաեզրաչափքային հսկողության, սահմանապահ, մաքսային, սանիտարահամաճարակաբանական, անասնաբուժական եւ ճանապարհապարեկային ծառայության պահակետերի մոտ.

11.18 ավտոմոբիլային ճանապարհների նախագծման ժամանակ ճանապարհորդող վարորդների եւ ուղեւորների կարճաժամկետ հանգստի համար պետք է նախատեսվի հրապարակների կառուցում.

11.19 հասարակական տրանսպորտի կանգառների վայրերում ավտոմոբիլային ճանապարհների նախագծման ժամանակ պետք է նախատեսվեն վայրէջքի հրապարակներ կամ սրահներ.

11.20 դեպի ճանապարհային եւ ճանապարհամերձ սպասարկման օբյեկտներ մուտք ապահովող ավտոմոբիլային ճանապարհի հատակագծի եւ երկայնական պրոֆիլի տարրերի պարամետրերի նախագծման ժամանակ չպետք է վատթարացվեն ճանապարհային պայմանները դրանց տեղակայման գոտում եւ առաջանան դժվարություններ ճանապարհային երթեւեկության կազմակերպման մեջ, որոնք նվազեցնում են տրանսպորտային ծառայություններից օգտվողների անվտանգությունը.

11.21 ստորգետնյա ճարտարագիտական հաղորդակցուղիների հետ նախագծվող ավտոմոբիլային ճանապարհի հատման դեպքում պետք է նախատեսվեն ավտոմոբիլային ճանապարհից առաջացած բեռնվածքների ներգործության ներքո այդ հաղորդակցուղիների պահպանվածությունն ապահովող միջոցներ, ինչպես նաեւ այդ հաղորդակցուղիների համար սահմանված պահպանական գոտիների չափսերի պահպանում.

11.22 նախագծման ժամանակ հարկավոր է նախատեսել բնակչության մնացած կատեգորիաների հետ հավասար՝ ծառայությունների բոլոր տեսակների մատչելիության հնարավորությունը, որոնք տրամադրվում են ավտոմոբիլային ճանապարհների կողմից ճանապարհային երթեւեկության սահմանափակ հնարավորություններով բոլոր կատեգորիաների մասնակիցների համար.

11.23 նոր կամուրջների նախագծման եւ առկա կամուրջների վերակառուցման ժամանակ հարկավոր է ընդունել այնպիսի նախագծային որոշումներ, որոնք ապահովում են՝

ա) կառույցների շահագործման հուսալիությունը, երկարակեցությունը եւ անխափանությունը տրանսպորտային միջոցների երթելեկության ժամանակ, որոնց եզրաչափային չափսերը եւ քաշային պարամետրերը համապատասխանում են Մաքսային միության անդամ պետությունների կողմից սահմանված պահանջներին.

բ) շահագործման ժամանակահատվածում տրանսպորտային միջոցների եւ հետիոտների երթելեկությունը, ինչպես նաեւ շինարարական մեքենաների, մեխանիզմների, սարքավորումների անվտանգությունը, շինարարության, վերակառուցման եւ հիմնական վերանորոգման ժամանակահատվածում աշխատողների անվտանգությունն ու աշխատանքի պահպանությունը.

գ) գերազանցման հաշվարկային հավանականության, հաշվարկային սառցահոսանքի ծախսման եւ ջրի մակարդակների անվտանգ բացթողումը, իսկ համապատասխան դասի նավարկելի եւ լաստարկելի գետերի վրա՝ անվտանգ նավարկելիության եւ լաստառաքման պահանջները.

դ) շրջակա միջավայրի պահպանությունը եւ դրա էկոլոգիական հավասարակշռության պահպանումը.

11.24 ավտոմոբիլային ճանապարհների վրա ուղանցույցների նախագծումն հարկավոր է իրականացնել ճանապարհների տվյալ հանգույցում երթելեկության հեռանկարային ինտենսիվության, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված տրանսպորտային միջոցների եզրաչափային չափսերի՝ ըստ լայնության եւ բարձրության, քաշային պարամետրերի, հատվող կամ հարող ճանապարհների դասին եւ կատեգորիային համապատասխան.

11.25 կամուրջների եւ ուղանցույցների նախագծման ժամանակ հարկավոր է

ապահովել՝

ա) արհեստական կառույցների վրա եւ դրանց մատուցներում երթելեկելի մասի լայնական պրոֆիլի համապատասխանությունը երթելեկության գոտիների լայնության եւ քանակության մասով, ինչպես նաեւ ճամփեզրերի վրա եզրային կամ ամրապնդված գոտիների բնութագրերին,

բ) փոքր շառավիղների հատակագծում կորերի վրա արհեստական կառույցների տեղակայման դեպքում վիրաժների կառուցումը եւ երթելեկելի մասի լայնացումը,

գ) անվտանգ հեռավորություն երթելեկելի մասի եզրից մինչեւ ուղանցույցների հենարանների մոտակա նիստը տարբեր դասերի եւ կատեգորիաների ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաեւ ուղանցույցների հենարանների կառուցվածքի համար,

դ) մետաղական պաշտպանակներ տեղադրելիս՝ պաշտպանակի վրա մեքենայի վրաերթի դեպքում դրա ճկվածքի ապահովման համար անհրաժեշտ հեռավորությունը մետաղական պաշտպանակներից մինչեւ հենարանի մոտակա նիստը.

11.26 թունելների նախագծման ժամանակ հարկավոր է նախատեսել անվտանգության հետեւյալ պահանջների պահպանումը՝

ա) 1 000 մ-ից ավելի երկարություն ունեցող թունելները կանգառման գոտիների բացակայության դեպքում պետք է ունենան տեղային լայնացումներ՝ հրապարակներով տրանսպորտային միջոցների վթարային կանգառման համար: Երկկողմանի երթելեկության դեպքում հրապարակներ պետք է լինեն թունելի յուրաքանչյուր կողմից.

բ) 1 500 մ-ից ավելի երկարությամբ թունելներում երթելեկության մեկ գոտիով օրական 2 000 ավտոմեքենայից բարձր հաշվարկային ինտենսիվության դեպքում հարկավոր է կառուցել վթարային ելքեր.

գ) վթարային ելքեր չունեցող թունելներում նախատեսել ճանապարհային երթելեկության մասնակիցների կողմից արտակարգ իրավիճակներում օգտագործելու համար նախատեսված մայթեր կամ անցումներ.

դ) բաժան փողերով թունելները պետք է միացված լինեն միմյանց հետ նույն հեռավորության վրա տեղակայված լայնական փողերով, որոնք նախատեսված են հետիոտների եւ վթարային-փրկարարական ծառայությունների մեքենաների ու մեխանիզմների անցման համար.

ե) 1 500 մ-ից ավելի երկարությամբ թունելներում՝ դրանց ճակատամուտքերի մոտ, ինչպես նաեւ թունելի ներսում նախատեսել սանիտարակենցաղային սարքվածքներով մասնագիտացված շինություններ՝ շահագործման եւ պահպանության ծառայությունների կարիքների համար՝ սարքավորված առաջին բուժօգնության, արտակարգ կապի եւ հրդեհաշիջման, եւ տեխնիկական ջրի մատուցման միջոցներով.

զ) թունելներից օգտողների անվտանգության ապահովման համար սարքվածքների եւ միջոցների տեղադրությունները պետք է նշված լինեն անվտանգության համապատասխան նշաններով: Երթելեկության ուղղությունները դեպի վթարային ելքեր, փրկարարական կետեր, արտակարգ կապի ապարատներ պետք է նշված լինեն տեսանելի մակագրություններով եւ խորհրդանիշներով: Անվտանգության նշաններն անհրաժեշտության դեպքում կարող են պարունակել արտակարգ իրավիճակներում օգտագործելու համար այլ տեղեկատվություն.

է) սարքավորել երթելեկության բարձր ինտենսիվությամբ թունելները տրանսպորտային հոսքերի կառավարման ավտոմատացված համակարգերով՝ ճանապարհային երթելեկության խցանումները կանխելու համար, այդ թվում՝ ճանապարհատրանսպորտային պատահարների եւ այլ արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում.

ը) նախատեսել մինչեւ թունել մտնելը եւ դրանից դուրս գալուց հետո, ինչպես

նաեւ երկու կամ ավելի փողերով թունելներում ճանապարհային պաշտպանակի անջրպետ՝ վթարային-փրկարարական ծառայությունների մեքենաների եւ մեխանիզմների անցման համար.

11.27 ավտոմոբիլային ճանապարհների նախագծման ժամանակ անհրաժեշտ է նախատեսել եզրաչափքային եւ քաշային հսկողության ստացիոնար կետեր ու քաշային հսկողության շարժական կետերի հրապարակներ, ինչպես նաեւ պահված տրանսպորտային միջոցների պահպանման համար մասնագիտացված կայանատեղիներ՝ մինչեւ պահման պատճառների վերացումը.

11.28 ավտոմոբիլային ճանապարհների վրայի կամուրջները, ուղանցույցները, թունելները եւ այլ ճանապարհային կառույցներ կարող են սարքավորված լինել նշված կառույցներ չարտոնված մուտք գործելուց ճարտարագիտական պաշտպանության, հրդեհի հայտնաբերման եւ տեղեկացման, հակաձխային պաշտպանության ու հրդեհաշիջման ավտոմատացված մասնագիտացված համակարգերով.

12. Ավտոմոբիլային ճանապարհների եւ կառույցների շինարարության, վերակառուցման եւ հիմնական վերանորոգման (այսուհետ՝ շինարարության) ժամանակ դրանցում պետք է պահպանվեն հետեւյալ պահանջները՝

ա) ավտոմոբիլային ճանապարհի կառուցումը ավտոմոբիլային ճանապարհի կենսական պարբերաշրջանի բոլոր փուլերում պետք է իրականացվի խիստ համապատասխան նախագծային փաստաթղթերին հողօգտագործման լիազորված մարմինների կողմից այդ նպատակներով հատկացված հողերի վրա.

բ) ավտոմոբիլային ճանապարհի շինարարության ժամանակ կիրառվող նյութերը եւ արտադրատեսակները պետք է ապահովեն ճանապարհաշինարարական աշխատանքների կատարումը՝ նախագծային փաստաթղթերին համապատասխան.

գ) շինարարական աշխատանքների ավարտից հետո ավտոմոբիլային ճանապարհը՝ հողերի մշտական արտուղման գոտու սահմաններում, պետք է

ազատված լինի ճանապարհաշինարարական տեխնիկայից, ժամանակավոր կառույցներից, շինարարական նյութերի եւ արտադրատեսակների մնացորդներից, ժամանակավոր ճանապարհային նշաններից եւ ցուցանակներից, ինչպես նաեւ այլ առարկաներից եւ գույքից, իսկ օբյեկտի շինարարության ժամանակահատվածում ժամանակավոր օգտագործման համար հատկացված հողերը պետք է բերվեն սկզբնական նշանակությամբ դրանց օգտագործման համար պիտանի վիճակի՝ Մաքսային միության անդամ պետությունների հողային օրենսդրությանը համապատասխան:

13. Շահագործման ժամանակ ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց վրայի կառույցների նկատմամբ անվտանգության պայմաններն են՝

13.1 շահագործման միջոցառումները պետք է ուղղված լինեն ավտոմոբիլային ճանապարհներով բեռների եւ ուղեւորների անվտանգ փոխադրման պայմանների ստեղծմանը դրանց ծառայության սահմանված ժամկետի ընթացքում՝

ա) կենսական պարբերաշրջանի ընթացքում տրանսպորտային, շահագործման, բնակլիմայական, արտակարգ եւ այլ գործոնների ներգործության դեպքում ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց վրայի կառույցների պահպանվածության ապահովման,

բ) տեխնիկական միջոցների համալիրի օգտագործմամբ ճանապարհային երթեւեկության կազմակերպման,

գ) անվտանգ եւ անխափան ճանապարհային երթեւեկությանը համապատասխանող երթեւեկելի մասի շահագործման վիճակի պահպանմանն ուղղված աշխատանքների անցկացման,

դ) ճանապարհատրանսպորտային պատահարների առաջացման ժամանակին վերացման կամ ոչիսկի նվազեցման, եւ ավտոմոբիլային ճանապարհի շահագործման վիճակից կախված՝ երթեւեկության սահմանափակման,

ե) երթեւեկության կազմակերպման մեջ փոփոխությունների մասին, այդ

թվում՝ կապված ճանապարհային աշխատանքների անցկացման, երթելեկության սեզոնային սահմանափակումների, տարերային աղետների, տեխնաձին աղետների եւ վթարների կամ այլ հանգամանքների հետ՝ ճանապարհային երթելեկության մասնակիցների ժամանակին տեղեկացման,

զ) տրանսպորտային միջոցների թույլատրելի քաշային եւ եզրաչափային պարամետրերի, ինչպես նաեւ ավտոմոբիլային ճանապարհի շահագործման վիճակի վատթարացման հնարավոր մնացորդային ռիսկերի եւ տրանսպորտային ծառայություններից օգտվողների ու երրորդ անձանց համար ավտոմոբիլային ճանապարհի առանձին հատվածներում անվտանգության սպառնալիքի առաջացման մասին տեղեկության մատչելիության ապահովման,

է) ձնահյուսերից եւ ավազահյուսերից ավտոմոբիլային ճանապարհի հատվածների պաշտպանության, ծածկի վրա ձնակեղեւի եւ մերկասառույցի առաջացման կանխման, ձնասառուցային նստվածքների մաքրման թեթեւացման եւ ճանապարհային պատվածքի ձմեռային սայթաքելիության վերացման,

ը) շահագործվող ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց վրայի ճանապարհային կառույցների պահպանվածության ապահովման համար տրանսպորտային միջոցների թույլատրելի քաշային եւ եզրաչափային պարամետրերի ներածման,

թ) երթելեկության անվտանգության ապահովման նպատակներով վտանգավոր բնական երեւոյթների կամ դրանց առաջացման վտանգի, ճանապարհներին վթարային վիճակների, ճանապարհային եւ վթարավերականգնողական աշխատանքների անցկացման, ճանապարհային երթելեկության անվտանգության համար սպառնալիք առաջացնող ավտոմոբիլային ճանապարհների եւ ճանապարհային կառույցների թերությունների ու վնասվածքների հայտնաբերման դեպքում, ինչպես նաեւ ավտոմոբիլային ճանապարհի, դրա հատվածների կառուցվածքային տարրերի կրողունակության նվազեցում եւ ճանապարհային պատվածքի թերությունների

գոյացում առաջացնող անբարենպաստ բնակլիմայական պայմանների առաջացման ժամանակաշրջանում ավտոմոբիլային ճանապարհների պահպանվածության ապահովման նպատակներով ժամանակավոր սահմանափակումների ներածման միջոցով.

13.2 ավտոմոբիլային ճանապարհը եւ դրա վրայի ճանապարհային կառույցները շահագործման ժամանակ պետք է համապատասխանեն անվտանգության հետեւյալ պահանջներին՝

ա) երթելեկելի մասի ճանապարհային պատվածքի վրա պետք է բացակայեն քանդվածքները, նստումները, խանդակները եւ այլ վնասվածքներ կամ թերություններ, ինչպես նաեւ կողմնակի առարկաներ, որոնք դժվարացնում են թույլատրելի արագությամբ տրանսպորտային միջոցների երթելեկությունը եւ վտանգ են ներկայացնում տրանսպորտային ծառայություններից օգտվողների եւ երրորդ անձանց համար:

Վնասվածքների առավելապես թույլատրելի նշանակությունները եւ այն գործոնների վերացման ժամկետները, որոնք դժվարացնում են թույլատրված արագությամբ տրանսպորտային միջոցների երթելեկությունը, սահմանվում են միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտներում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտներում, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության անդամ պետությունների կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը:

Անհրաժեշտության դեպքում՝ մինչեւ երթելեկելի մասի նշված թերությունների վերացումը, ավտոմոբիլային ճանապարհի վնասված հատվածները պետք է նշված լինեն համապատասխան ժամանակավոր ճանապարհային նշաններով կամ ճանապարհային երթելեկության կազմակերպման այլ տեխնիկական միջոցներով:

Ջրտարը երթելեկելի մասից պետք է գտնվի այնպիսի վիճակում, որը

բացառում է պատվածքի վրա եւ ճամփեզրերին ջրի լճացումը.

բ) ճանապարհային պատվածքի կցորդման որակները պետք է ապահովեն տրանսպորտային միջոցների՝ ճանապարհային երթելեկության կանոններով թույլատրված արագությամբ երթելեկության անվտանգ պայմանները սահմանված պահանջներին դրանց շահագործման վիճակի համապատասխանության պայմանով: Կցորդման որակների բարելավմանն ուղղված աշխատանքների կատարման ժամկետները սահմանվում են միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտներում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտներում, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության անդամ պետությունների կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը.

գ) ճանապարհային պատվածքի հարթությունը պետք է ապահովի տվյալ դասի եւ կատեգորիայի ավտոմոբիլային ճանապարհի համար սահմանված երթելեկության արագությամբ երթելեկելու անվտանգ պայմանները: Պատվածքների հարթության նկատմամբ պահանջները սահմանվում են միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտներում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտներում, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության անդամ պետությունների կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը.

դ) ճամփեզրի եւ բաժանարար գոտու բարձրացումը երթելեկելի մասի մակարդակից եզրաքարերի բացակայություն դեպքում չի թույլատրվում: Ճամփեզրերը եւ բաժանարար գոտիները, որոնք եզրաքարերով առանձնացված չեն երթելեկելի մասից, չպետք է լինեն երթելեկելի մասի հարող եզրի մակարդակից 4 սմ-ից ավելի ցածր.

ե) ճամփեզրերը չպետք է ունենան ձեւախախտումներ, վնասվածքներ, որոնք

նշված են սույն հոդվածի 13.2 կետի (ա) ենթակետում ճանապարհային պատվածքների համար: Նախքան ճամփեզրերի թերությունները վերացնելը պետք է սահմանվեն ժամանակավոր ճանապարհային նշաններ կամ ճանապարհային երթելեկության կազմակերպման այլ տեխնիկական միջոցներ:

զ) համապատասխան դասի եւ կատեգորիաների ավտոմոբիլային ճանապարհների վրա չի թույլատրվում տեսանելիության փաստացի հեռավորության նվազումը կատարվող շահագործման գործողությունների կամ դրանց բացակայության արդյունքում՝ նվազագույն պահանջվողից:

13.3 կամուրջները, ուղանցույցները եւ այլ ճանապարհային կառույցներ դրանց ծառայության ժամկետում պետք է տարածության մեջ պահպանեն նախագծային փաստաթղթերով սահմանված դիրքը, իսկ դրանց տեխնիկական վիճակը պետք է ապահովի կառույցի անվտանգ շահագործումը, ինչպես նաեւ ամբողջ կառույցի մեխանիկական դիմադրությունը՝ ամբողջությամբ եւ դրա առանձին մասերի, հաշվարկային բեռնվածքներին եւ ներգործությանը: Կառույցի հենամիջային կառուցվածքը կրող տարրերի տեխնիկական վիճակը պետք է ապահովի բեռնամբարձության նախագծային մեծությունը: Ենթակամրջային տարածության վիճակը պետք է ապահովի սահմանված հաշվարկային հավանականությունը գերազանցող հեղեղաջրերի եւ սառցահոսանքի բարձր ջրերի անվտանգ բացթողումը:

13.4 թունելների շահագործման ժամանակ հարկավոր է պահպանել հետեւյալ պահանջները՝

ա) թունելի անվտանգ շահագործման վտանգ առաջացնող թունելային երեսարկի (թունելի պատերի) վնասվածքների ժամանակին վերացումը:

բ) էլեկտրալուսավորության, կապի եւ բարձրախոս ազդարարման, ճանապարհային երթելեկության կազմակերպումը եւ անվտանգությունն ապահովող ավտոմատացված համակարգերի, ինչպես նաեւ թունելամերձ կառույցներ չարտոնված մուտք գործելուց պաշտպանության, հրդեհի

հայտնաբերման եւ տեղեկացման, հակաձխային պաշտպանության եւ ավտոմատացված հրդեհաշիջման կառավարման համակարգերի աշխատունակ վիճակի պահպանումը.

գ) տրանսպորտային ծառայություններից օգտվողների ժամանակին տեղեկացումը եւ թունելի անհապաղ փակումը՝ դրանում արտակարգ իրավիճակների սպառնալիքի առաջացման դեպքում.

13.5 ճանապարհային երթեւեկության տեխնիկական միջոցները պետք է համապատասխանեն անվտանգության հետեւյալ պահանջներին՝

ա) ճանապարհային նշաններ:

Ճանապարհային նշանները պետք է ունենան դրանց տեսանելիությունն ապահովող՝ տրված բնութագրեր, որոնք սահմանված են միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտներում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտներում, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության անդամ պետությունների կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը: Համապատասխան ճանապարհային նշանների տեղադրությունը պետք է ապահովի տրանսպորտային միջոցների վարորդների եւ հետիոտների ժամանակին տեղեկացումը ճանապարհային պայմանների եւ երթեւեկության թույլատրելի ռեժիմների փոփոխության մասին: Ճանապարհային նշանների՝ բացառությամբ ժամանակավորների, տեղադրումը չպետք է հանգեցնի ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց վրայի կառույցների մոտեցման եզրաչափքերի փոքրացմանը: Բացակայող ճանապարհային նշանների տեղադրումը եւ վնասվածների փոխարինումը հարկավոր է իրականացնել այն ժամկետներում, որոնք սահմանված են միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտներում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտներում, որոնց կամավոր

հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության անդամ պետությունների կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը:

բ) ճանապարհային գծանշում:

Ճանապարհային գծանշումը պետք է նկատելի լինի շահագործման բոլոր պայմաններում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ավտոմոբիլային ճանապարհի մակերեսույթը աղտոտված կամ ծածկված է ձնասառույցային նստվածքներով: Այն դեպքում, երբ երթևեկության ռեժիմները որոշող գծանշումը դժվար նկատելի է կամ չի կարող ժամանակին վերականգնվել, անհրաժեշտ է տեղադրել համապատասխան ճանապարհային նշաններ:

Ճանապարհային գծանշումը պետք է վերականգնվի այն դեպքում, եթե դրա մաշվածությունը կամ քայքայումը թույլ չեն տալիս միանշանակ ընկալել դրանում գետեղված տեղեկությունը: Ճանապարհային գծանշման վերականգնումն անհրաժեշտ է իրականացնել այն պայմանների առաջացման դեպքում, որոնք ապահովում են գծանշման նյութերի եւ արտադրատեսակների կիրառումը դրանց կիրառման համար սահմանված պայմաններին համապատասխան:

գ) ճանապարհային լուսացույց:

Ճանապարհային լուսացույցները պետք է տեղադրվեն այնպիսի ձեւով, որպեսզի դրանք տարբեր եղանակային եւ լուսային պայմաններում հեշտությամբ ընկալվեն ճանապարհային երթևեկության մասնակիցների կողմից, չլինեն փակված որեւէ խոչընդոտի կողմից, ապահովեն սպասարկման հարմարությունը եւ նվազեցնեն դրանց վնասման հավանականությունը:

Ճանապարհային լուսացույցների ազդանշանների նվազագույն տեսանելիությունը՝ ներառյալ խորհրդանիշերը, պետք է ապահովի տրանսպորտային միջոցների վարորդների համար հնարքաբանեցման կամ կանգառման անվտանգ իրականացման հնարավորություն՝ օրվա ինչպես լուսավոր, այնպես էլ մութ ժամերին: Ճանապարհային լուսացույցների եւ դրա

ամրակման տարրերը չպետք է ունենան ազդանշանների տեսանելիության վրա ազդող վնասվածքներ:

Ճանապարհային լուսացույցի շարքից դուրս եկած լույսի աղբյուրի փոխարինումը, ինչպես նաև ճանապարհային լուսացույցի պատյանում էլեկտրահավաքակցման սխեմայի կամ էլեկտրական մալուխի վնասվածքների վերացումը ճանապարհաշահագործման ծառայության կողմից դա հայտնաբերելուց եւ փաստաթղթային ձեւակերպումից հետո պետք է իրականացնել այն ժամկետներում, որոնք սահմանված են միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտներում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտներում, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության անդամ պետությունների կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը:

դ) ուղղորդիչ սարքվածքներ:

Ճանապարհային ազդանշանային սյունիկների եւ ուղեայունների նվազագույն տեսանելիությունը պետք է ապահովի տրանսպորտային միջոցների վարորդների համար ճանապարհային երթելելության կանոններով թույլատրված արագությամբ անվտանգ երթելելության հնարավորություն: Ճանապարհային ազդանշանային սյունիկները եւ ճանապարհային ուղեայունները չպետք է ունենան դրանց տեսողական ընկալման եւ ճանապարհային երթելելության անվտանգության վրա ազդող վնասվածքներ:

Ճանապարհաշահագործման ծառայության կողմից վնասված ճանապարհային ազդանշանային սյունիկների եւ ճանապարհային ուղեայունների վնասվածքները հայտնաբերելուց եւ փաստաթղթային ձեւակերպումից հետո դրանք պետք է փոխարինվեն այն ժամկետներում, որոնք սահմանված են միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտներում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների

ազգային (պետական) ստանդարտներում, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության անդամ պետությունների կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը.

ե) ազդանշանման համակարգերը երկաթուղային գծանցների վրա:

Ազդանշանման համակարգերը երկաթուղային գծանցների վրա պետք է ապահովեն ճանապարհային երթևեկության մասնակիցների տեսողության եւ լսողության օրգանների միջոցով դրանց ընկալումը ավտոմոբիլային ճանապարհի շահագործման հաստիքային պայմանների դեպքում:

Երկաթուղային գծանցների վրա ազդանշանների տեսանելիությունը պետք է տրանսպորտային միջոցների վարորդների համար ապահովի ճանապարհային երթևեկության կանոններով թույլատրված արագությամբ իրենց անվտանգ անցման հնարավորություն: Ազդանշանման համակարգերը երկաթուղային գծանցների վրա չպետք է ունենան տեսողական եւ լսողական ընկալման վրա ազդող վնասվածքներ.

զ) ճանապարհային երթևեկության կազմակերպման ժամանակավոր տեխնիկական միջոցներ:

Ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցները, որոնց կիրառումը պայմանավորված է ժամանակավոր բնույթի պատճառներով (ճանապարհաշինարարական աշխատանքներ, անբարենպաստ բնակլիմայական պայմանների առաջացման ժամանակաշրջանում ավտոմոբիլային ճանապարհի, դրա հատվածների կառուցվածքային տարրերի կրողունակության նվազեցման եւ այլ դեպքերում սահմանված կարգով տրանսպորտի երթևեկության սահմանափակման կամ դադարեցման կազմակերպում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման նպատակներով), պետք է ժամանակին սահմանվեն (ստեղծվեն) եւ օգտագործվեն միայն սահմանափակող գործոնների գործողության ժամանակահատվածներում:

Վարորդների կողմից ժամանակավոր ճանապարհային նշանների ավելի լավ

ընկալման համար մեկ հենարանի վրա պետք է տեղադրված լինի երկու նշանից ոչ ավելի եւ լրացուցիչ տեղեկության մեկ նշան (ցուցնակ):

Ժամանակավոր ճանապարհային նշանները եւ ճանապարհային լուսացույցները, որոնց գործողությունը կրում է ժամանակավոր բնույթ, այն ժամանակի համար, երբ չի պահանջվում դրանց կիրառումը, պետք է փակված լինեն ծածկոցներով: Ճանապարհային երթեւեկության կազմակերպման ժամանակ ժամանակավոր տեխնիկական միջոցների կիրառման անհրաժեշտությունն առաջացրած պատճառների վերացումից հետո դրանք պետք է ապամոնտաժվեն:

13.6 պաշտպանակները ավտոմոբիլային ճանապարհներին:

Ճանապարհաշահագործման ծառայության կողմից ավտոմոբիլային ճանապարհների վրայի վնասված պաշտպանակները հայտնաբերելուց եւ փաստաթղթային ձեւակերպումից հետո դրանք պետք է վերականգնվեն այն ժամկետներում, որոնք սահմանված են միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտներում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտներում, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության անդամ պետությունների կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը:

13.7 հորիզոնական լուսավորություն արհեստական լուսավորությունից:

Տարբեր դասերի եւ կատեգորիաների ավտոմոբիլային ճանապարհների երթեւեկելի մասի պատվածքի արհեստական լուսավորության դեպքում հորիզոնական լուսավորությունը պետք է ապահովի ճանապարհային երթեւեկության կանոններով թույլատրված արագությամբ երթեւեկելու անվտանգ պայմանները:

Ճանապարհաշահագործման ծառայության կողմից արհեստական լուսավորության շարքից դուրս եկած լույսի աղբյուրը հայտնաբերելուց եւ

փաստաթղթային ձեւակերպումից հետո դրա փոխարինումը հարկավոր է իրականացնել այն ժամկետներում, որոնք սահմանված են միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտներում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտներում, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության անդամ պետությունների կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը.

13.8 արտաքին գովազդի միջոցներ:

Ավտոմոբիլային ճանապարհի արտուղման գոտում չի թույլատրվում գովազդային կամ այլ տեղեկատվության տեղադրումը, որը չունի անմիջական առնչություն երթեւեկության կազմակերպմանը, եթե Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման նպատակով արտաքին գովազդի միջոցները չպետք է՝

- տեղադրվեն ճանապարհային նշանի, դրա հենարանի կամ երթեւեկության կարգավորման համար նախատեսված յուրաքանչյուր այլ հարմարանքի վրա.

- վատթարացնեն ճանապարհային երթեւեկության կարգավորման միջոցների տեսանելիությունը կամ նվազեցնեն դրանց արդյունավետությունը.

- ունենան նմանություն (արտաքին տեսքի, պատկերի կամ ձայնային էֆեկտի) ճանապարհային երթեւեկության կազմակերպման տեխնիկական միջոցների եւ հատուկ ազդանշանների հետ, ինչպես նաեւ ստեղծեն ճանապարհի վրա տրանսպորտային միջոցի, հետիոտնի, կենդանու կամ այլ առարկայի գտնվելու տպավորություն.

- ունենան պատկերի տարրերի պայծառություն ճանապարհային նշանների լուսաչափական բնութագրերից բարձր ներքին եւ արտաքին լուսավորության դեպքում.

- լուսավորվեն օրվա մութ ժամերին ճանապարհների հատվածներում, որտեղ ճանապարհային նշանները չունեն արհեստական լուսավորություն.

- տեղադրվեն տրանսպորտային ուղեբաժանքների, ավտոմոբիլային ճանապարհների փոխհատման եւ հարման, երկաթուղային գծանցների եւ արհեստական կառույցների գոտում՝ դրանցից տեսանելիության հաշվարկային հեռավորությունից ավելի մոտ.

13.9 ավտոմոբիլային ճանապարհի պատվածքի մաքրումը ձյունից պետք է իրականացվի երթելակելի մասից, հասարակական վերգետնյա տրանսպորտի կանգառներից, մայթերից, ճամփեզրերից, իջատեղերից, տրանսպորտային միջոցների կայանման եւ կանգառման հրապարակներից:

Թույլ է տրվում երթելակելի մասի ամբողջ լայնությամբ 100 մմ-ից ոչ ավելի հաստությամբ պնդացված ձնածածկույթի շերտի առկայությամբ առանձին ավտոմոբիլային ճանապարհների շահագործումը: Ձյան հեծանածածկի վրա չի թույլատրվում 30 մմ-ից ավելի խորությամբ անվաճրերի եւ 40 մմ-ից ավելի բարձրությամբ կամ խորությամբ բարձրացման առանձին գագաթների, իջեցումների եւ խանդակների առկայությունը:

Ավտոմոբիլային ճանապարհների համար, կախված դրանց նշանակությունից, դասից եւ կատեգորիայից, ինչպես նաեւ երթելակության ինտենսիվությունից եւ կազմից, ձմեռային սայթաքելիության եւ ձնամաքրումն ավարտելու ժամկետները սահմանվում են միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտներում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտներում, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության անդամ պետությունների կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը:

Լեռնային ավտոմոբիլային ճանապարհների ձնահյուսավտանգ հատվածներում պետք է ձեռնարկվեն ձնահյուսի վտանգի ժամանակին

կանխարգելման եւ վերացման, ինչպես նաեւ անհրաժեշտ հակաձնահյուսային կառույցների ստեղծման միջոցներ.

13.10 Ավտոմոբիլային ճանապարհներով խոշորագրաչափ եւ ծանրաքարշ տրանսպորտային միջոցների երթեւեկությունը թույլ է տրվում միայն հատուկ թույլտվությունների առկայության դեպքում, որոնք տրամադրվել են Մաքսային միության անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից:

14. Շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման ժամանակ կիրառվող ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների անվտանգության ընդհանուր պահանջներին են վերաբերում՝

14.1 ճանապարհաշինարարական նյութերը եւ արտադրատեսակները, որոնք արտադրվում եւ ներմուծվում են Մաքսային միության անդամ պետություններ, չպետք է վտանգի առաջացման սպառնալիք ստեղծեն տրանսպորտային ծառայություններից օգտվողների եւ երրորդ անձանց, շրջակա միջավայրի, բուսական եւ կենդանական աշխարհի համար դրանց կենսական պարբերաշրջանի բոլոր փուլերում.

14.2 ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների արտադրությունը, փոխադրումը, պահպանումը եւ կիրառումը պետք է ապահովեն ավտոմոբիլային ճանապարհի եւ դրա վրայի ճարտարագիտական կառույցների տարբեր կառուցվածքային տարրերում դրանց աշխատանքի հուսալիությունը դրանց կենսական պարբերաշրջանի ընթացքում տրանսպորտային բեռնվաճառների, կլիմայական եւ այլ գործոնների ներգործության ներքո հետեւյալ հետեւանքները բացառող պայմաններում՝

ա) ավտոմոբիլային ճանապարհի կամ կառույցների, կամ դրանց հատվածների (մասերի) քայքայում.

բ) ճանապարհային կառուցվածքների անդառնալի ձեւախախտումներ.

գ) ավտոմոբիլային ճանապարհի կամ դրա վրայի կառույցների

տրանսպորտաշահագործման հիմնական բնութագրերի անթույլատրելի նվազում.

14.3 ճանապարհաշինարարական նյութերը եւ արտադրատեսակները ավտոմոբիլային ճանապարհի եւ դրանց վրայի ճանապարհային կառույցների ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում պետք է տրանսպորտային, բնական եւ այլ գործոնների ներգործության նկատմամբ լինեն կայուն.

14.4 ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների անվտանգությունն ապահովվում է կենսական պարբերաշրջանի բոլոր փուլերում հետեւյալ հիմնական պահանջների պահպանմամբ՝

ա) բնական ճառագայթաակտիվ նուկլիդների հանրագումարային արդյունավետ տեսակարար ակտիվությունը չպետք է գերազանցի թուլատրելի սահմանները, որոնք սահմանված են միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտներում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտներում, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության անդամ պետությունների կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը.

բ) ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների արտադրման, պահպանման, փոխադրման, կիրառման, ճանապարհային աշխատանքների անցկացման ժամանակ, ինչպես նաեւ ավտոմոբիլային ճանապարհի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա դրանց համատեղ ներգործության արդյունքում վնասակար քիմիական նյութերի սահմանային պարունակությունը չպետք է գերազանցի թուլատրված նշանակությունները, որոնք սահմանված են միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտներում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտներում, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության անդամ պետությունների կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի

պահանջների պահպանումը.

գ) ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների ֆիզիկա-քիմիական հատկությունները չպետք է ստեղծեն պայթյունի առաջացման եւ (կամ) հրդեհի զարգացման սպառնալիք.

դ) ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների ֆիզիկա-մեխանիկական հատկությունները պետք է ապահովեն ավտոմոբիլային ճանապարհի կառուցվածքային տարրերի հաշվարկային կայունությունը տրանսպորտային բեռնվածքի եւ բնական գործոնների համատեղ ազդեցության դեպքում.

14.5 ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց վրայի կառույցների շինարարությունը, վերակառուցումը, հիմնական վերանորոգումը եւ շահագործումը պետք է իրականացվեն սույն Տեխնիկական կանոնակարգի եւ նախագծային փաստաթղթերի պահանջներին համապատասխանող ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների կիրառմամբ:

Հոդված 4. Համապատասխանության կանխավարկած

15. Ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց վրայի ճանապարհային կառույցների համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգին ապահովվում է անվտանգության նկատմամբ դրա պահանջների կատարմամբ անմիջականորեն կամ միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտների պահանջների կատարմամբ, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության անդամ պետությունների կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի եւ համապատասխանության գնահատման (հավաստման) իրականացման համար անհրաժեշտ պահանջների պահպանումը:

Հոդված 5. Համապատասխանության գնահատում

16. Ավտոմոբիլային ճանապարհների կենսական պարբերաշրջանի բոլոր փուլերում սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրանց համապատասխանության գնահատումն իրականացվում է հետևյալ կարգով՝

ա) ավտոմոբիլային ճանապարհների ճարտարագիտական հետազոտությունների եւ նախագծային փաստաթղթերի մշակման դեպքում՝ փորձաքննության ձեւով.

բ) ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, վերակառուցման եւ հիմնական վերանորոգման դեպքում՝ աշխատանքների կատարման նկատմամբ շինարարական (արտադրական) հսկողության, ճանապարհաշինարարական աշխատանքների կատարման եւ (կամ) կառուցվածքային տարրերի միջանկյալ ընդունման, ավարտված օբյեկտների կամ դրանց առանձին հատվածների ընդունման եւ շահագործման մեջ դնելու ձեւերով.

գ) ավտոմոբիլային ճանապարհների, դրանց վրայի ճանապարհային կառույցների եւ սարքավորվածության տարրերի շահագործման դեպքում՝ ավտոմոբիլային ճանապարհների, դրանց վրայի ճանապարհային կառույցների եւ սարքավորվածության տարրերի վիճակի ընթացիկ հսկողություն, ինչպես նաեւ դրանց վերանորոգման ու պահպանման ուղղությամբ կատարված աշխատանքների ընդունում.

դ) ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների համար՝ փորձարկման (մուտքային հսկողություն) եւ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստման ձեւերով:

Համապատասխանության գնահատման իրականացման կարգը եւ ընթացակարգն իրականացվում են նախքան Մաքսային միության հանձնաժողովի համապատասխան որոշման ընդունումը՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների համար

համապատասխանության հավաստման իրականացման կարգը եւ ընթացակարգն անցկացվում են Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 24-րդ կետին համապատասխան:

17. ճարտարագիտական հետազոտությունների փորձաքննության արդյունքներ:

Փորձաքննության եզրակացությունը պետք է հետեւություններ պարունակի նախագծման առաջադրանքի եւ հետազոտությունների ծրագրի պահանջներին ճարտարագիտական հետազոտությունների նյութերի համապատասխանության վերաբերյալ, ճարտարագիտական հետազոտությունների արդյունքների ամբողջության եւ արժանահավատության բնութագիրը, ինչպես նաեւ դրանց հիման վրա՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ ճանապարհային երթեւեկության եւ շրջակա միջավայրի համար վտանգի առաջացման ռիսկերը վերացնող եւ նվազեցնող նախագծային որոշումների ընդունման հնարավորությունները:

18. Նախագծային փաստաթղթերի փորձաքննություն:

Ավտոմոբիլային ճանապարհի շինարարության մշակմամբ ավարտված նախագծային փաստաթղթերը ենթակա են փորձաքննության՝ նախագծման առաջադրանքին, սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրանց համապատասխանելու որոշման համար:

Նախագծային փաստաթղթերը, նախքան դրանց հաստատումը, քննարկվում են պատվիրատուի կողմից:

Հաստատված նախագծային կամ այլ տեխնիկական փաստաթղթեր վկայում են սույն Տեխնիկական կանոնակարգի՝ ավտոմոբիլային ճանապարհի նախագծման, շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման փուլերում տեխնիկական կարգավորման օբյեկտների անվտանգության ապահովման պահանջներին դրանց համապատասխանեցման մասին:

19. Ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց վրայի կառույցների շինարարության, վերակառուցման ու հիմնական վերանորոգման աշխատանքների կատարման շինարարական (արտադրական) հսկողություն (այսուհետ՝ շինարարական):

Շինարարական հսկողության իրականացման համար պատվիրատուն կարող է ներգրավել անկախ եւ իրավասու կազմակերպությունների:

Շինարարական հսկողությունն իրականացվում է պատվիրատուի, ինչպես նաեւ շինարարությունն իրականացնող իրավաբանական անձի (կապալառուի) կողմից:

Շինարարական հսկողության անցկացման արդյունքներով կազմվում են աշխատանքների եւ (կամ) կառուցվածքների առանձին տեսակների զննման համապատասխան ակտեր:

Շինարարական հսկողության անցկացման ժամանակ անցկացվում են անհրաժեշտ ուսումնասիրություններ, փորձարկումներ եւ չափումներ չափման համապատասխան մեթոդների եւ միջոցների կիրառմամբ: Չափման միջոցները, ինչպես նաեւ շինարարական հսկողության համար օգտագործվող մեթոդները պետք է համապատասխանեն չափումների միասնականության ապահովման ոլորտում Մաքսային միության անդամ պետությունների կանոնադրություններով սահմանված պահանջներին:

Ավտոմոբիլային ճանապարհը կամ դրա հատվածը շահագործման ընդունելուց հետո շինարարական հսկողության արդյունքները պետք է փաստաթղթավորվեն եւ պահվեն Մաքսային միության անդամ պետությունների կանոնադրություններով սահմանված ժամկետի ընթացքում:

20. Կատարված ճանապարհաշինարարական աշխատանքների եւ (կամ) կառուցվածքային տարրերի միջանկյալ ընդունում:

Կատարված ճանապարհաշինարարական աշխատանքների միջանկյալ ընդունումն իրականացվում է հաստատված նախագծային փաստաթղթերին եւ

սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին կատարված ճանապարհաշինարարական աշխատանքների համապատասխանությունը որոշելու նպատակով:

Կատարված ճանապարհաշինարարական աշխատանքների եւ (կամ) կառուցվածքային տարրերի միջանկյալ ընդունումն անցկացնելու արդյունքներով կազմվում եւ ստորագրվում է գնահատման օբյեկտի ընդունման կամ հայտնաբերված թերությունների վերացման համար անհրաժեշտ լրամշակումների վերաբերյալ որոշմամբ ակտ:

Կատարված աշխատանքների այս կամ այն միջանկյալ ընդունմանը վերաբերող աշխատանքների որոշակի տեսակների ցանկերը պետք է որոշվեն նախագծային փաստաթղթերով եւ մշակվեն կապալառուի կողմից կատարողական փաստաթղթերի կազմում եւ համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

Նախքան կատարված ճանապարհաշինարարական աշխատանքների եւ (կամ) կառուցվածքային տարրերի միջանկյալ ընդունումը՝ ավտոմոբիլային ճանապարհի այդ հատվածի վրա հետագա աշխատանքների կատարումն արգելվում է:

21. Շինարարությունը (վերակառուցված, հիմնովին վերանորոգված) ավարտված ավտոմոբիլային ճանապարհների եւ դրանց վրայի կառույցների ընդունումն ու շահագործման մեջ դնելը:

Ընդունման ենթակա են շինարարությամբ, վերակառուցմամբ եւ հիմնական վերանորոգմամբ ավարտված ավտոմոբիլային ճանապարհները կամ դրանց հատվածները, որոնք ունեն ինքնուրույն տրանսպորտային նշանակություն, սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերին, ինչպես նաեւ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրանց համապատասխանելու պայմանով:

Կառուցված (վերակառուցված) ավտոմոբիլային ճանապարհներով նախքան

ընդունող հանձնաժողովների կողմից դրանց շահագործման ընդունելը, ընդհանուր օգտագործման վերգետնյա տրանսպորտային միջոցների երթելեկությունը պետք է արգելվի կամ սահմանափակվի ճանապարհային երթելեկության կազմակերպման տեխնիկական միջոցներով:

Օբյեկտը շահագործման ընդունելու հաստատված ակտը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին ընդունվող օբյեկտի համապատասխանության ապացույց է:

22. Ավտոմոբիլային ճանապարհի եւ դրա վրայի կառույցների ընթացիկ հսկողություն:

Ավտոմոբիլային ճանապարհի եւ դրա վրայի կառույցների ընթացիկ հսկողությունն իրականացվում է պատվիրատուի կողմից պարբերական զննության, ինչպես նաեւ ավտոմոբիլային ճանապարհների ախտորոշման միջոցով ավտոմոբիլային ճանապարհների կառուցվածքային առկա թերությունների հայտնաբերմամբ եւ հաշվառմամբ, դրանց պահպանման եւ շահագործման վիճակի որակի գնահատմամբ, որոնք սահմանված են միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտներով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտներով, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության անդամ պետությունների կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը:

23. Ավտոմոբիլային ճանապարհի եւ դրա վրայի կառույցների նորոգման ու պահպանման համար կատարված աշխատանքների ընդունումը կատարվում է դրանց պահպանման մակարդակը գնահատելու միջոցով:

Ավտոմոբիլային ճանապարհի եւ դրա վրայի կառույցների վիճակի ընթացիկ վերահսկողության արդյունքներով ընդունվում է գնահատման օբյեկտի ընդունման կամ հայտնաբերված թերությունների վերացման համար անհրաժեշտ լրամշակումների մասին որոշում: Ավտոմոբիլային ճանապարհի եւ դրա վրայի

կառույցների նորոգման ու պահպանման աշխատանքների ընդունման անցկացման արդյունքներով կազմվում է համապատասխան ակտ:

24. Ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների համապատասխանության հավաստումն իրականացվում է Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատված միասնականացված ընթացակարգերին համապատասխան.

24.1 ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, վերակառուցման, հիմնական վերանորոգման եւ շահագործման համար ստացվող ճանապարհաշինարարական նյութերը եւ արտադրատեսակները ենթակա են մուտքային հսկողության՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծային փաստաթղթերի եւ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանելու դրանց փորձարկումներն անցկացնելու միջոցով:

Կապալառուն պատասխանատվություն է կրում օբյեկտ ստացվող նյութերի եւ արտադրատեսակների որակի համար: Կապալառուն ունի ցանկում ներառված՝ ստացվող նյութերի եւ արտադրատեսակների բոլոր փորձարկումների անցկացման իրավունք՝ նախագծային փաստաթղթերի պահանջներին համապատասխանությունը պարզելու համար: Պատվիրատուն անցկացնում է ստացվող նյութերի եւ արտադրատեսակների ընտրովի փորձարկումներ՝ նախագծային փաստաթղթերի պահանջներին համապատասխանությունը պարզելու համար:

Նախքան շուկայում շրջանառության մեջ բաց թողնելը՝ ճանապարհաշինարարական նյութերը եւ արտադրատեսակները պետք է անցնեն Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին համապատասխանության հավաստում:

Ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների համապատասխանության հավաստումն իրականացվում է Մաքսային միության

հանձնաժողովի կողմից հաստատված՝ «Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերում համապատասխանության գնահատման (հավաստման) տիպային սխեմաների կիրառման կարգի մասին» հիմնադրույթին համապատասխան.

24.2 ճանապարհաշինարարական նյութերը, որոնք ներառված են սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին հավելվածում, ներկայացված Ցանկում ենթակա են համապատասխանության հավաստման՝ համապատասխանության հայտարարագրման ձեռով (1h, 3h, 4h սխեմաներ): 1h եւ 3h սխեմաները՝ սերիական թողարկվող արտադրանքի համար, 4h սխեման՝ արտադրանքի խմբաքանակի համար:

Համապատասխանությունը հայտարարագրելիս՝ հայտատու կարող է լինել Կողմի օրենսդրության համապատասխան դրա տարածքում որպես անհատ ձեռնարկատեր գրանցված կամ արտադրող հանդիսացող, կամ օտարերկրյա արտադրողի հետ ունեցած պայմանագրի հիման վրա Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի համապատասխանության եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի անհամապատասխանության համար պատասխանատվության մասերով վերջինիս գործառույթներն իրականացնող (օտարերկրյա արտադրողի գործառույթներն իրականացնող անձ) իրավաբանական կամ ֆիզիկական անձը.

24.3 Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ հավելվածում ներկայացված ցանկում ներառված արտադրատեսակները ենթակա են համապատասխանության հավաստման՝ սերտիֆիկացման ձեռով (սխեմաներ 1ս, 3ս):

Սերտիֆիկացման ժամանակ հայտատու կարող է լինել Կողմի օրենսդրության համաձայն դրա տարածքում գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձը՝ որպես անհատ ձեռնարկատեր, կամ արտադրողը կամ

վաճառողը, կամ օտարերկրյա արտադրողի հետ ունեցած պայմանագրի հիման վրա վերջինիս՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի համապատասխանության եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի անհամապատասխանության դեպքում պատասխանատվության մասերով գործառույթներն իրականացնող անձը (օտարերկրյա արտադրողի գործառույթներն իրականացնող անձ):

Արտադրատեսակների սերտիֆիկացումն անցկացվում է Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում ընդգրկված՝ սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հավաստման)) հավատարմագրված մարմնի կողմից (այսուհետ՝ սերտիֆիկացման մարմին)։

24.4 հայտատուի որոշմամբ՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հոդվածի 24.2 կետում նշված Ցանկում ներառված ճանապարհաշինարարական նյութերի համապատասխանության հայտարարագրման փոխարեն կարող է անցկացվել սերտիֆիկացում՝ սույն Տեխնիկական կանոնակարգով արտադրատեսակների համար նախատեսված հայտարարագրման սխեմաներին համարժեք սերտիֆիկացման սխեմաներով, այդ թվում՝ հայտատուի մոտ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հավաստման սեփական ապացույցների բացակայության կամ ոչ բավականաչափ լինելու դեպքում։

24.5 համապատասխանության հայտարարագիրը կամ համապատասխանության հավաստագիրը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների համապատասխանությունը հավաստող միակ փաստաթուղթն է։

Համապատասխանության հայտարարագիրը եւ համապատասխանության հավաստագիրն ունեն հավասար իրավաբանական ուժ ու Մաքսային միության

միասնական մաքսային տարածքում գործում են այն ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների նկատմամբ, որոնք Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվում են համապատասխանության հայտարարագրի կամ համապատասխանության հավաստագրի գործողության ժամանակ.

24.6 ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների համապատասխանության հավաստումն անցկացնելու ժամանակ հայտատուն ձեւավորում է ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների՝ սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի լրակազմ, որը ներառում է՝

- կազմակերպության ստանդարտը (առկայության դեպքում).
- արտադրողի կառավարման համակարգի հավաստագիրը (առկայության դեպքում).
- արտադրողի, վաճառողի, օտարերկրյա արտադրողի գործառույթներն իրականացնող անձի եւ (կամ) փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) կողմից անցկացված՝ ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների փորձարկումների արձանագրությունները (առկայության դեպքում).
- նյութերի ու կոմպլեկտավորող արտադրատեսակների համապատասխանության սերտիֆիկատները կամ դրանց փորձարկումների արձանագրությունները (առկայության դեպքում).
- տվյալ ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների համապատասխանության հավաստագրերը՝ ստացված օտարերկրյա սերտիֆիկացման մարմիններից (առկայության դեպքում).

- այլ փաստաթղթեր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն հավաստում են սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության

պահանջներին ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների համապատասխանության մասին (առկայության դեպքում)։

24.7 1h, 3h, 4h սխեմաների համաձայն՝ ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների համապատասխանության հայտարարագրումն իրականացվում է՝

- սեփական ապացույցների (1h սխեմա),

- այն ապացույցների, որոնք ստացվել են Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ներառված հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) մասնակցությամբ (սխեմաներ 3h, 4h),

- արտադրողի կողմից ճանապարհաշինարարական նյութերի փորձարկումների անցկացման եւ արտադրական հսկողության հիման վրա:

Ճանապարհաշինարարական նյութերի փորձարկումներն անցկացվում են փորձարկման հավատարմագրված լաբորատորիայի կողմից, որն ընդգրկված է Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում:

Սերիական թողարկվող ճանապարհաշինարարական նյութերի համապատասխանության հայտարարագրումն իրականացնում է արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը)՝ 1h, 3h սխեմաներով, խմբաքանակները՝ 4h սխեմայով։

24.8 սխեմաներով (1h, 3h, 4h) հայտարարագրման համապատասխանության անցկացման ժամանակ իրականացվում են հետեւյալ գործողությունները՝

- տեխնիկական փաստաթղթերի ձեւավորում եւ վերլուծություն՝ հաշվի առնելով 5-րդ հոդվածի 24.6 կետի դրույթները։

- արտադրական հսկողության իրականացում (1h, 3h սխեմաներ).
- արտադրանքի նմուշների փորձարկման անցկացում (1h, 3h, 4h սխեմաներ).
- համապատասխանության հայտարարագրի ընդունում եւ գրանցում (1h, 3h, 4h սխեմաներ).
- շրջանառության միասնական նշանի զետեղում (1h, 3h, 4h սխեմաներ).

24.9 որպես համապատասխանության հայտարարագրման ընդունման համար հիմք հանդիսացող ապացուցիչ նյութեր օգտագործվում են սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հոդվածի 24.6 կետում նշված փաստաթղթերը:

Որպես նշված փաստաթղթերի կիրառման պայմաններ կարող են դիտարկվել՝

1) փորձարկումների արձանագրությունների համար՝

փորձարկումների արձանագրություններում այն ցուցանիշների նշանակության առկայությունը, որոնք հավաստում են համապատասխանությունը հայտագրված որոշակի արտադրանքի նկատմամբ կիրառվող սույն Տեխնիկական կանոնակարգում սահմանված բոլոր պահանջներին.

փորձարկումների արձանագրությունների տարածումը հայտագրված ճանապարհաշինարարական նյութերի նկատմամբ.

2) արտադրության որակի կառավարման համակարգի հավաստագրերը, եթե դրանք տարածվում են հայտագրված ճանապարհաշինարարական նյութերի պատրաստման վրա.

3) սահմանված պահանջներին ճանապարհաշինարարական նյութերի համապատասխանությունն ուղղակի կամ անուղղակի կերպով հավաստող այլ փաստաթղթեր, կամավոր սերտիֆիկացման դեպքում տրված հայտագրված ճանապարհաշինարարական նյութերի համապատասխանության

սերտիֆիկատները.

24.10 համապատասխանության հայտարարագիրը ձեակերպվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ հաստատված միասնական ձեռով:

Համապատասխանության հայտարարագիրը ենթակա է գրանցման՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատված կարգին համապատասխան: Համապատասխանության հայտարարագրի գործողությունը սկսվում է դրա գրանցման օրվանից: Համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը՝ հինգ տարուց ոչ ավելի:

Հայտատուն պարտավոր է համապատասխանության հայտարարագիրը եւ ապացուցողական նյութերը պահպանել համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետն ավարտվելու պահից՝ տասը տարվա ընթացքում.

24.11 արտադրատեսակների սերտիֆիկացումն անցկացնելու ժամանակ (1ս, 3ս սխեմաներ) իրականացվում են հետեւյալ գործողությունները՝

- հայտատուի կողմից արտադրանքի սերտիֆիկացման մարմին սերտիֆիկացումն անցկացնելու հայտի ներկայացում կից տեխնիկական փաստաթղթերի հետ միասին (1ս, 3ս սխեմաներ)՝ հաշվի առնելով սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հոդվածի 24.6 կետը.

- հայտի քննությունը եւ արտադրանքի սերտիֆիկացման մարմնի կողմից դրա վերաբերյալ որոշման ընդունումը (1ս, 3ս սխեմաներ).

- արտադրանքի սերտիֆիկացման մարմնի կողմից նմուշների ընտրություն փորձարկումների անցկացման համար (1ս, 3ս սխեմաներ)

- հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի կողմից արտադրանքի նմուշների փորձարկման անցկացում (1ս, 3ս սխեմաներ).

- արտադրանքի սերտիֆիկացման մարմնի կողմից արտադրության

վիճակի վերլուծության անցկացում (1ս սխեմա).

- արտադրանքի սերտիֆիկացման մարմնի կողմից փորձարկման եւ արտադրության վիճակի վերլուծության արդյունքների ամփոփում եւ հայտատուին համապատասխանության հավաստագրի տրամադրում (1ս սխեմա).

- փորձարկման արդյունքների վերլուծություն եւ հայտատուին համապատասխանության հավաստագրի տրամադրում (3ս սխեմա).

- շրջանառության միասնական նշանի զետեղում (1ս, 3ս սխեմաներ).

- սերտիֆիկացված արտադրանքի տեսչական հսկողություն (1ս սխեմա).

24.12 1ս սխեման՝ սերիական թողարկվող արտադրանքի սերտիֆիկացման համար: 3ս սխեման՝ արտադրանքի խմբաքանակի համար.

24.13 հայտատուն կարող է սերտիֆիկացման հայտով դիմել ցանկացած սերտիֆիկացման մարմին:

Սերտիֆիկացում անցկացնելու հայտը ձեւակերպվում է հայտատուի կողմից եւ պետք է պարունակի՝

- դիմումատուի անվանումը եւ գտնվելու վայրը.

- արտադրողի անվանումը եւ գտնվելու վայրը.

- տեղեկություններ արտադրատեսակների (դրանց կազմության) վերաբերյալ եւ դրանց նույնականացնող հատկանիշները (անվանումը, ծածկագիրը՝ ըստ Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության դասակարգչի, այն փաստաթուղթը, որի համաձայն պատրաստված է արտադրատեսակը (միջպետական կամ ազգային ստանդարտ, կազմակերպության ստանդարտը), թողարկման ձեւը՝ սերիական արտադրություն կամ խմբաքանակ, պայմանագրի վավերապայմանները եւ այլն).

- սերտիֆիկացման սխեման:

Սերտիֆիկացման մարմինն ուսումնասիրում է հայտը եւ ընդունում է որոշում

սերտիֆիկացում անցկացնելու հնարավորության վերաբերյալ: Դրական որոշման դեպքում սերտիֆիկացման մարմինը սերտիֆիկացմանն առնչվող աշխատանքների կատարման վերաբերյալ պայմանագիր է կնքում հայտատուի հետ: Սերտիֆիկացման մարմինը անցկացնում է սերտիֆիկացման աշխատանքներ, պատրաստում է որոշումը եւ դրական արդյունքի դեպքում հայտատուին տրամադրում է համապատասխանության սերտիֆիկատ: Սերտիֆիկացման բացասական արդյունքի դեպքում սերտիֆիկացման մարմինը հայտատուին է ուղարկում հիմնավորված որոշում՝ համապատասխանության սերտիֆիկատի տրամադրումը մերժելու վերաբերյալ:

Արտադրատեսակի տիպային նմուշի (տիպային նմուշների) փորձարկումներն անցկացվում են հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) կողմից այն սերտիֆիկացման մարմնի հանձնարարականով, որին տրվում է փորձարկումների արձանագրությունը:

Արտադրության վիճակի վերլուծությունը սերտիֆիկացման մարմնի կողմից անցկացվում է արտադրողի մոտ: Վերլուծության արդյունքները ձեւակերպվում են ակտով:

Սերտիֆիկացման սխեմայով նախատեսված դրական արդյունքների դեպքում սերտիֆիկացման մարմինը ձեւակերպում է համապատասխանության հավաստագիրը եւ այն հանձնում է հայտատուին: Համապատասխանության հավաստագիրը ձեւակերպվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ հաստատված միասնական ձեւի համաձայն:

24.14 սերտիֆիկացման մարմինը տրված համապատասխանության հավաստագրի վերաբերյալ տեղեկությունները փոխանցում է Միասնական ձեւով ձեւակերպված՝ տրված համապատասխանության հավաստագրերի եւ գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստր:

Թողարկվող՝ սերիական արտադրության արտադրատեսակների համար համապատասխանության հավաստագրի գործողության ժամկետը սահմանվում է

հինգ տարուց ոչ ավելի, թողարկված խմբաքանակի համար ժամկետ չի սահմանվում:

Համապատասխանության հավաստագիրը կարող է ունենալ հավելված, որը պարունակում է որոշակի այնպիսի արտադրատեսակների ցանկ, որոնց վրա տարածվում է դրա գործողությունը: Հավելվածը ձեակերպվում է, եթե՝

- պահանջվում է մանրամասնել հայտատուի կողմից թողարկվող եւ միեւնույն պահանջների համաձայն հավաստագրված համանման արտադրանքի խմբի կազմը.

- պահանջվում է նշել արտադրող գործարանները, որոնք մտնում են ավելի խոշոր՝ արտադրանքի արտադրության միասնական պայմաններ ունեցող միավորումների մեջ.

24.15 արտադրողը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրության գործընթացը լինի անընդհատ եւ ապահովի արտադրվող ճանապարհաշինարարական նյութերի եւ արտադրատեսակների համապատասխանությունը Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին.

24.16 Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մականշումը:

Սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին համապատասխանող եւ համապատասխանության հավաստման ընթացակարգով անցած ճանապարհաշինարարական նյութերը եւ արտադրատեսակները պետք է ունենան Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մականշում:

Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մականշումն իրականացվում է՝ նախքան ճանապարհաշինարարական նյութերը եւ արտադրատեսակները շուկայում շրջանառության մեջ դնելը:

24.17 Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգին համապատասխան՝ սերտիֆիկացման ձեռով համապատասխանության հավաստման ենթակա Արտադրատեսակների ցանկում որոշված արտադրատեսակների յուրաքանչյուր միավորի վրա, արտադրատեսակի ամբողջ ծառայության ընթացքում հստակ եւ պարզ պատկեր ապահովող ցանկացած միջոցով: Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է հենց արտադրատեսակի վրա.

24.18 Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգին համապատասխան՝ համապատասխանության հայտարարագրման ձեռով համապատասխանության հավաստման ենթակա ճանապարհաշինարարական նյութերի ցանկում ներառված ճանապարհաշինարարական նյութերի վրա զետեղելիս՝ դրվում է փաթեթվածքի վրա (դրա առկայության դեպքում) եւ պետք է պարունակվի ճանապարհաշինարարական նյութերին կից ներկայացվող՝ ապրանքաուղեկից փաստաթղթերում.

24.19. ճանապարհաշինարարական նյութերը եւ արտադրատեսակները մակնշվում են Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով Մաքսային միության բոլոր այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին դրանց համապատասխանության դեպքում, որոնք տարածվում են դրանց վրա եւ որոնցով նախատեսվում է Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի զետեղում:

25. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվում է ավտոմոբիլային ճանապարհների ոլորտում պետական վերահսկողության մարմնի կողմից

Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 6. Երաշխիքային վերապահում

26. Պաշտպանության հոդվածի կիրառման համար հիմք կարող են ծառայել հետևյալ դեպքերը՝

- սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները չկատարելը.
- սույն Տեխնիկական կանոնակարգի հետ փոխկապակցված ստանդարտների սխալ կիրառումը, եթե տվյալ ստանդարտները կիրառվել են:

27. Մաքսային միության անդամ պետության գործադիր իշխանության իրավասու մարմինը, որի տարածքում հայտնաբերված է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող արտադրանքը, պարտավոր է միջոցներ ձեռնարկել՝ իր տարածքում այդ արտադրանքի շրջանառության մեջ թողարկելու սահմանափակման եւ (կամ) արգելման, ինչպես նաեւ շուկայից այդ արտադրանքը դուրս հանելու առնչությամբ:

28. Մաքսային միության անդամ պետության գործադիր իշխանության իրավասու մարմինը պարտավոր է ծանուցել Մաքսային միության հանձնաժողովին եւ Մաքսային միության այլ անդամ պետությունների գործադիր իշխանության իրավասու մարմիններին ընդունված որոշման մասին՝ նշելով տվյալ որոշումն ընդունելու պատճառները եւ տրամադրելով տվյալ միջոցը ձեռնարկելու անհրաժեշտությունը պարզաբանող ապացույցներ:

Մաքսային միության «Ավտոմոբիլային
ճանապարհների անվտանգություն»
տեխնիկական կանոնակարգի
(ՄՄ ՏԿ 014/2011)

Ցանկ

Մաքսային միության «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգություն»
տեխնիկական կանոնակարգի համաձայն համապատասխանության
հայտարարագրման ձեռով համապատասխանության հաստատման ենթակա
ճանապարհաշինարարական նյութերի

Համարը՝ ը/կ	Նյութի անվանումը	Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
1.	Բնական ավազ՝ ճանապարհային շինարարության համար	2505-ից
2.	Մանրացված ավազ՝ ճանապարհային շինարարության համար	2517-ից
3.	Իսիճ եւ կոպիճ՝ լեռնային ապարներից ճանապարհային շինարարության համար	2517-ից
4.	Հանքային փոշի	2517-ից
5.	Ցեմենտ ճանապարհային շինարարության համար	2523-ից
6.	Իսիճ եւ ավազ՝ խարամային ճանապարհային շինարարության համար	2618 00 000 0-ից

7.	Հանքաձյուղ նավթային ճանապարհային մածուցիկ	2713 20 000 0-ից
8.	Հանքաձյուղ նավթային ճանապարհային հեղուկ	2713 20 000 0-ից
9.	Ճանապարհային հանքաձյուղային մածիկ եւ հերմետիկ	2713-ից
10.	Նյութեր ճանապարհային գծանշման համար	3208-ից

Մաքսային միության «Ավտոմոբիլային
ճանապարհների անվտանգություն»
տեխնիկական կանոնակարգի
(ՄՄ ՏԿ 014/2011)

Ցանկ

Մաքսային միության «Ավտոմոբիլային ճանապարհների
անվտանգություն» տեխնիկական կանոնակարգի համաձայն
սերտիֆիկացման ձեռնարկի համապատասխանության հաստատման
ենթակա արտադրատեսակների

Համարը՝ ը/կ	Նյութի անվանումը	Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
1.	Ճանապարհային լուսացույցներ	8530-ից
2.	Ճանապարհային նշաններ	8608 00-ից
3.	Ճանապարհային պաշտպանակներ	8608 00-ից
4.	Ցուցատախտակ՝ փոփոխվող տեղեկությամբ	8530-ից
5.	Ճանապարհային ազդանշանային սյունիկներ	8608 00-ից
6.	Ճանապարհային ուղեայրներ	8608 00-ից
7.	Ճանապարհային լուսանդրադարձիչներ	8608 00-ից
8.	Արհեստական անհարթություններ հավաքովի	8608 00-ից
9.	Հենարաններ ճանապարհային երթեւեկության կազմակերպման տեխնիկական միջոցների եւ անշարժ էլեկտրական լուսավորության հավաքակցման համար	8608 00-ից

10.	Լուսատուներ՝ անշարժ էլեկտրական լուսավորության համար	8530-ից
11.	Քարեր բնական եւ արհեստական կողեզրային	2516-ից
12.	Խողովակներ ճանապարհային ջրանցման	6810-ից
13.	Երկաթբետոնե սալ ճանապարհային	6810-ից
14.	Վաքեր ճանապարհային ջրահեռ	6815-ից